# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻԹԻ 40 (1640) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 2, 2013
VOLUME 33, NO. 40 (1640) SATURDAY, NOVEMBER 2, 2013

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Հանդիպումները Երեք Յարանուանութիւններու Հոգեւոր Պետերուն Հետ



*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ՝ Ընկ. Յակոբ Տիգրանեանին Երկուշաբթի օրը այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ հայոց՝ Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս-պատրիարքին եւ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու միութեան նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակէօզեանին, քննարկելու համար տեղական, շրջանային ու ազգային վերջին զարգացումները: Պատուիրակութեան մաս կազմեցին Կեդրոնական Վարչութեան փոխատենապետ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան, Ընկ. Տոքթ. Եղիկ Ճէրէճեան եւ Ընկ. Շաւարշ Ակինեան, ընկերակցութեամբ ՍԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ՝ Ընկ. Ալեքսան Քէօշկէրեանի:*

Շար.ը էջ 5

## Ղարաբաղի հարցով՝ Հայաստանի վրայ նոր ճնշումներ

*Անցնող Սեպտեմբեր 3-ին Սերժ Սարգսեան յայտարարեց որ Հայաստան որոշած է միանալ Ռուսաստանի ղեկավարած Մաքսային Միութեան, հակառակ որ մինչ այդ իշխանութիւնները կը յայտարարէին որ, այդ միութեան հետ ցամաքային սահման չունենալով, Հայաստանի մասնակցութիւնը գործնական չի կրնար ըլլալ: Միւս կողմէ, Հայաստան կը պատրաստուէր Նոյեմբերի Վիլնիւսի մէջ ստորագրելու Եւրոպայի հետ Արեւելեան Գործընկերութեան համաձայնագիրը, որուն շուրջ կայացած բանակցութիւնները տեւած էին աւելի քան երեք տարի:*

*Քաղաքական շրջանակներու մօտ տիրող կարծիքը այն է որ, Նախագահ Սարգսեանի որոշումը արդիւնք էր Ռուսաստանի Նախագահ Վլատիմիր Փութինի կողմէ եղած ճնշումներուն:*

*Հայաստանի դիրքորոշման մէջ կատարուած այս փոփոխութիւնը նոր կացութեան առջեւ դրած է իշխանութիւններուն, յատկապէս կապուած ղարաբաղեան հարցի հետ, ուր ճնշումներ կը կատարուին ոչ միայն Արեւմուտքի կողմէ, այլ նաեւ ոչ հայանպաստ յայտարարութիւններ կը հնչեն Մաքսային Միութեան անդամ միւս երկիրներուն կողմէ:*

*Վերջին օրերուն Եւրոպական Խորհրդարանը Արեւելեան հարեւանութեան երկիրներու հետ յարաբերութիւններու ամրապնդման եւ մինչ այսօր գրանցուած յառաջընթացի ու անյաջողութիւններու վերաբերեալ բանաձեւ ընդունած է, ուր անդրադարձ կատարուած է նաեւ Ղարաբաղի խնդիրին: Մասնաւորապէս, Եւրախորհրդարանը յայտնած է, որ Արեւելեան Գործընկերութեան անդամ երկրի կողմէ մէկ այլ երկրի տարածքներու գրաւումը խախտում է Արեւելեան Գործընկերութեան հիմնարար սկզբունքներուն: Եւրախորհրդարանը միեւնոյն ժամանակ ընդգծած է, որ խնդիրը պէտք է կարգաւորուի 1993 թուականի ՄԱԿ-ի չորս բանաձեւերու հիման վրայ, ուր կոչ կը կատարուէր դուրս բերել հայկական զօրքերը Քելբաջարի, Աղդամի եւ այլ «գրաւուած» տարածքներէն:*

*Միւս կողմէ, Ռուսաստանի հեռատեսիլի Թիւ 1 ալիքը հաղորդեց,*

Շար.ը էջ 4

## Արցախի Փոխ Վարչապետ Արթուր Աղաբէկեանի մամլո ասուլիսը



**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

*Իր անձին եւ առաքելութեան շուրջ արդէն իսկ ստեղծուած համակրանքին ու զօրակցութեան արտայայտութիւնն էր Արցախի հանրապետութեան Փոխ Վարչապետ Արթուր Աղաբէկեանի Քալիֆորնիահայ մամուլի հետ ունեցած յաջող ասուլիսը, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի 28 Հոկտեմբեր 2013, կ.ե. ժամը 5.00-ին՝ Հայաստան Հիմնադրամի Տեղական Կեդրոնական Մարմնի նախաձեռնութեամբ: Հրաւէրին ընդառաջած էին «Մասիս» շաբթ., «Ասպարէզ» օրաթերթ, «Նոր Օր» շաբթ., «Հայ Կեանք» շաբթ. "Armenian Observer" շաբթ. եւ «Նոր Հայաստան» եռօրեան:*

*Հայաստան Հիմնադրամի Տեղական Մարմնի կողմէ Արցախի Հանրապետութեան Ներկայացուցիչ՝ Պրն. Սարգիս Գօթանճեանի մամլոյ ներկայացուցիչներուն առաքուած բարի գալուստի եւ նախաձեռնուած ներկայ հանդիպման նպատակին մասին համառօտակի անդրադարձումէն ետք՝ խօս-*

Շար.ը էջ 5

## Ամերիկացի Գոնկրէսականները կոչ կ՛ընեն Սպիտակ Տան՝ չխոչընդոտել Հայ Որբերու Գորգի ցուցադրումը

*Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամներ՝ դեմոկրատ Ատամ Շիֆ եւ հանրապետական Տէյվիտ Վալատաօ դիմած են Գոնկրէսի իրենց պաշտօնակիցներուն՝ իրենց ստորագրութիւնները դնելու Սպիտակ Տան ուղղուած նամակին տակ, ուր կոչ կը կատարուի վերատեսութեան ենթարկելու հայ որբերու կողմէ գործուած եւ Օսմանեան Թուրքիոյ կողմէ 1915-էն 1923 թուականներուն գործադրուած Հայոց ցեղասպանութեան ժամանակ որպէս ԱՄՆ-ի կողմէ ցուցաբերուած մարդասիրական օժանդակութեան համար երախտապարտութիւն՝ Նախկին Նախագահ Քալվին Քուլիճին նուիրուած գորգի հրապարակային ցուցադրումը արգիլելու մասին որոշումը:*

*Գոնկրէսականները կը յայտնեն որ, «Հայ որբերու գորգը» Միացեալ Նահանգներու պատմութեան մաս կը կազմէ եւ կը պատկանի Ամերիկայի ժողովրդին:*

*«Ամերիկահայ կազմակերպութիւնները աշխատանք կը տանին գորգը հանրութեան ներկայացնելու կապակցութեամբ եւ այս նպատակով բազմիցս դիմած են Սպիտակ Տուն եւ Պետական Քարտուղարութիւն, իրենց խնդրանքին ընդառաջելու համար: Ամերիկահայերու դիմումները, դժբախտաբար, տակաւին չեն բաւարարուած», - Ներկայացուցիչներու Տան միւս անդամներուն ուղղուած նամակին մէջ կը գրեն գոնկրէսականներ Վալատաօ եւ Շիֆ:*

*Նոյն պահանջով Նախագահ Պարաք Օպամայի աշխատակազմի ղեկավար Տէնիս ՄըքՏոնոյին նամակով դիմած է գոնկրէսական Պրատ Շըրմըն:*

*Գոնկրէսական Շըրմընի համաձայն, «Սմիթսոնիըն» թանգարանին մէջ կազմակերպուող ցուցահանդէսի ժամանակ «Հայ որբերու գորգի» ցուցադրումը չեղեալ յայտարարուած է Սպիտակ Տան կողմէ գորգը չտրամադրելու անբացատրելի որոշման պատճառով:*

*«Ուրոյն այս աշխատանքը պէտք չէ թաքցուած ըլլայ պահեստներու մէջ: Հակառակը՝ այն պէտք է մնայուն ցուցադրութեան դրուի «Սմիթսոնիըն» թանգարանէն ներս: Անցեալը ճանչնալը ու յիշելը կը բխի մեր պետութեան շահերէն: Մենք պէտք է ճանչնանք եւ դասեր քաղենք ողբերգական այս իրադարձութիւններէն, որոնց հետեւանքով որբ դարձած էին գորգագործները՝ երաշխաւորելու համար, որ անոնք երբեք չեն կրկնուիր: Կոչ կ՛ընեմ Սպիտակ Տան՝ պահեստարանէն դուրս բերել պատմական նշանակութիւն ունեցող այս գլուխ գործոցը եւ մնայուն ցուցադրման դնել «Սմիթսոնիըն» թանգարանէն ներս», - ըսած է գոնկրէսական Շըրմըն:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԵՐԲ ՊԵՏՈՒԹԵԱՆԸ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՀԴՄ-Ն

**ՋԵՅՄՍ ՅԱԿՈԲԵԱՆ**

«Նախորդ տարիների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ ունենք խիստ անարդիւնաւէտ համակարգ, 94%-ն չէր հասնում այն մարդուն, որը աշխատանք էր փնտռում, միայն վեց տոկոսն էր հասնում շահառուներին: Սա մեր երկրի համար արդիւնաւէտ չէ, շատ երկրներ այսպիսի համակարգ չունեն, աղքատ երկրների համար այս համակարգը չի կարող արդիւնաւէտ լինել», - յայտարարել է վարչապետ Տիգրան Սարգսեանը, խօսելով գործազրկութեան 18 հազար դրամ նպաստները վերացնելու կառավարութեան քայլի մասին, որը ստացաւ ԱԺ հաւանութիւնը:

Վարչապետն իհարկէ իրաւացի է՝ Հայաստանում սոցիալական համակարգերը աշխատում են մեղմ ասած անարդիւնաւէտ, եւ դրանից օգտւում են գրեթէ բոլորը, միայն թէ ոչ նրանք, ովքեր յատկապէս ունեն այդ օգնութեան կարիքը: Իհարկէ, երկրում, ուր թաքնուած գործազրկութեան մեծ խնդիր կայ, գործազրկութեան նպաստը դառնում է յարաբերական:

Բայց, երեւի թէ սխալ կը լինի ասել, որ այդ նպաստը ստացողները բոլորն էլ եղել են ապահովուած կամ գործազրկուած, պարզապէս առանց որեւէ տեղ գրանցուելու: Ինչ որ մարդիկ այդուհանդերձ ստացած կը լինեն այդ 18 հազարը, լինելով իրապէս գործազուրկ եւ կարիքաւոր: Փաստօրէն, իշխանութիւնն այդ մարդկանց, որոնք անկասկած քիչ չեն, զրկում է անգամ 18 հազար նպաստից:

Այստեղ ամենաէականն իհարկէ նպաստը չէ, այլ այն տրամաբանութիւնն ու սկզբունքը, որով առաջնորդւում է պետութիւնը: Փաստօրէն, պետութիւնը կոռուպցիայի դէմ պայքարում է պարզապէս կարիքաւորներին զրկելով 18 հազար դրամից: Իշխանութիւնը ոչ թէ փորձում է պայքարել սոցիալական համակարգում առկայ կոռուպցիայի դէմ, ոչ թէ փորձում է պայքարել այդ համակարգի արդիւնաւէտութեան համար, ձեռնարկել քայլեր, որ նպաստը ստանան հէնց կարիքաւորները, այլ ուղղակի վերցնում եւ կտրում է նպաստը՝ չկայ՝ նպաստ, չկայ՝ խնդիր սկզբունքով:

Հետաքրքրական է, օրինակ՝ «ատկատների» դէմ պայքար նոյն սկզբունքով չի տարւում: Այսինքն, բոլորը գիտեն, որ շատ ոլորտներում առկայ է կոռուպցիա, պետական շատ ծախսեր իրականացւում են այդ ռիսկով, Իշխան Զաքարեանը նոյնիսկ պիւտճէի 2/3-ի ռիսկայնութեան մասին էր խօսում: Բայց այդ ռիսկային ծախսերից որեւէ մէկի մասով սկզբունքը նոյնը չէ, ինչ գործազրկութեան նպաստների: Երեւի պատճառն այն է, որ այդ դէպքում, կիրառուող սկզբունքի դիմաց վճարելու էին այն մարդիկ, ովքեր իւրային են: Օրինակ, Տիգրան Սարգսեանը յայտարարում է, որ պետական գնումների, պետպատուէրի շրջանակում ծառայութիւններ մատուցողների մի զգալի մասն իր ընկերները, հարազատները, մտերիմներն են, դա հօ չի նշանակում, որ կոռուպցիա եւ շահերի բախում կայ:

Իհարկէ չի նշանակում, բայց երբ կարիքաւորների նպաստը կտրւում է, որովհետեւ այդ ոլորտում կոռուպցիա կայ, զարմանալի է, որ անկարիքաւորների պետական փողերը չեն կտրւում՝ չէ՝ որ այդտեղ էլ «ատկատ» կայ՝ միլիոնների, ոչ թէ 18 հազարների «ատկատ»:

Ընդհանրապէս, Հայաստանի կառավարման համակարգում գործում է շատ հետաքրքրական տրամաբանութիւն: Օրինակ, ներդրւում են այսպէս ասած նոր սերնդի ՀԴՄ-ներ, որոնք պէտք է արդիւնաւէտ դարձնեն գործարարների վերահսկողութիւնը: Այդ ՀԴՄ-ները ներկրում է ինչ որ մէկը՝ կարելի է չկասկածել, որ իշխանութեան բարձրագոյն օղակների հետ կապ ունեցող, եւ թանկ գնով վաճառում բիզնեսի վրայ: Այսինքն, բիզնեսը վճարում է այն բանի համար, որ իշխանութիւնն իրեն վերահսկի: Ընդ որում, դրանից հարստանում է իշխանութեան հետ կապ ունեցող մի բիզնեսմեն, որը ներկրում է այսպէս կոչուած նոր սերնդի ՀԴՄ-ները:

Տիգրան Սարգսեանը, խորհրդարանում ներկայացնելով 2014 թուականի պիւտճէի նախագիծը, յայտարարել է, որ բիզնես միջավայրի բարելաւման առումով Հայաստանը նահանջ ունի: Իսկ ի՞նչ պէտք է ունենար Հայաստանը: Բիզնես միջավայրի բարելաւման առաջընթաց են ունենում այն երկրները, որոնք կոռուպցիայի դէմ պայքարում են ոչ թէ գործազուրկների եւ բիզնեսի հաշուին, այլ իրաւապահպան համակարգի՝ ոստիկանութեան, դատախազութեան, յատուկ քննչական ծառայութեան, ԱԱԾ-ի, նաեւ այսպէս կոչուած բարձրագոյն պաշտօնատար անձանց էթիկայի յանձնաժողովի, դրա խորհրդարանական կրկնօրինակի միջոցով:

Ներդրումներն աճում են այն երկրներում, որտեղ այդ կառոյցներն աշխատում են եւ կատարում իրենց սահմանադրական պարտականութիւնները: Հակառակ դէպքում աճում է արտագաղթը:

«ԼՐԱԳԻՐ»

# ԱՊՀ-Ն ԻՆՉԻ* ՀԱՄԱՐ Է ՊԱՏԺՈՒՄ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

**ԷԴԻՏԱ ԴԱՒԹԵԱՆ**

Երէկ, կարելի է ասել, ցնցող ձեւակերպումներով են հանդէս եկել ԱՊՀ անդամ երկրների ղեկավարները՝ Հայաստանի առնչութեամբ:

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը դէմ չէ Մաքսային Միութեանը Հայաստանի անդամակցելուն, սակայն նա ուշադրութիւն է հրաւիրել Ղարաբաղեան հակամարտութեան չկարգաւորուած լինելու հանգամանքին, այս մասին յայտարարել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն. «Դա նշանակում է, որ Ատրպէյճանի կողմից կը լինեն հարցեր: Ինչպէս ես եմ հասկացել, Իլհամ Ալիեւն այդ հարցն արդէն իսկ ուղղել է իր ղազախ գործընկերոջը: Մենք պէտք է հաշուի նստենք Ատրպէյճանի կարծիքի հետ: Եւրոպան շատ չի ձգտում իր շարքերն ընդունել նմանատիպ տարածքային խնդիրներով երկրների»:

Ահա, այսպիսի ուշագրաւ իրավիճակ: Դէպի Ռուսաստան կողմնորոշման ուղղութեամբ քայլ կատարած Սերժ Սարգսեանին պատժում է ոչ միայն Եւրոպան, այլեւ՝ ԱՊՀ գործընկերները: Իհարկէ, եթէ առաջինի դէպքում ամէն ինչ հասկանալի է, ԱՊՀ գործընկերների պահուածքը, որքան էլ զարմանալի է, միւս կողմից էլ, չի կարելի, անսպասելի համարել: Նոյնիսկ Ատրպէյճանը, որը Մաքսային Միութեանն անդամակցելու մասին չի էլ մտածում՝ աւելի կշիռ ունեցող երկիր է, քան՝ Սերժ Սարգսեանի դէպի եւրասիական ինտեգրացիա գնացող Հայաստանը: Սա է իրականութիւնը:

Ինչպէս հաղորդում են ռուսական գործակալութիւնները վկայակոչելով Ռուսաստանի նախագահի օգնական Եուրի Ուշակովին, Վլադիմիր Պուտինի, Ալեքսանդր Լուկաշենկոյի եւ Նուրսուլթան Նազարբաեւի հանդիպման գլխաւոր հարցերից մէկը, ինչպէս ակնկալւում է, կը դառնայ Մաքսային Միութեանն անդամակցելու Հայաստանի հայցի քննարկումը: Ուշակովը չի բացառել, որ հանդիպմանը կարող է մասնակցել նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը: Բացի այդ, առաջնորդները կը քննարկեն միութեանն անդամակցելու Ղրղզստանի ծրագրերը:

Ուշակովի խօսքերով՝ գագաթնաժողովին կը քննարկուեն նաեւ «ՄՄ-ի եւ Միասնական տնտեսական տարածութեան գործարկման մի քանի պրակտիկ հարցեր»: Նախագահները պայմանաւորուել են նաեւ յատուկ ուշադրութիւն դարձնել 2015թ. Յունուարի 1-ից Եւրասիական տնտեսական միութեան ձեւաւորմանը: «Կարեւոր թեմա է ինտեգրացիոն գործընթացների մասնակիցների կազմի հնարաւոր ընդլայնումը Հայաստանի վերջին հայցի ֆոնին: Այդ հարցը շատ կարեւոր է»,- ընդգծել է Կրեմլի ներկայացուցիչը:

Սրան զուգահեռ, չեն դադարում, իհարկէ, Մաքսային Միութեան մշուշոտ ապագայի մասին տեղեկութիւնները: Սակայն, կարեւորն այն է, որ նոյնիսկ այս համատարած անորոշութեան ֆոնին Հայաստանը նաեւ Ռուսաստանի եւ ԱՊՀ գործընկերների համար ցանկալի չէ:

Մի խօսքով, Սերժ Սարգսեանը յայտնուել է եւ՝ Արեւմուտքի, եւ Ռուսաստանի համար ոչ ցանկալի գործընկերոջ կարգավիճակում եւ երբ բանը հասնի Ատրպէյճան-Հայաստան ընտրութեանը, այս երկրներն էլ հակուած են լինելու ընտրել Ալիեւի ղեկավարած Ատրպէյճանը:

«ՀԱՅԵԼԻ»

# ԽՆՃՈՅՔԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Որ կողմ նայում ես՝ մանրմունր մարդկային կրքեր են, նեղ անձնական վիրաւորանքներ, դրանց վրայ խարսխուած ինտրիգներ: Արթուր Բաղդասարեան-Գագիկ Ծառուկեան կոնֆլիկտն այդքան չէր մեծանայ, եթէ ԲՀԿ առաջնորդի տղամարդկային արժանապատուութիւնը խոցուած չլինէր: Նախօրէին Կոմպոզիտորների միութեան նախագահ կը ընտրուէր Ռոբերդ Ամիրխանեանը, եթէ մի խումբ յայտնի երգահան-երաժիշտներ վիրաւորուած չլինէին Ամիրխանեանի պահուածքից, որակումներից:

Նորաստեղծ ՀՀՇ-ն ու ՀԱԿ-ի վերածուած ՀՀՇ-ականները եւս չեն ներում տարիներով կուտակուած վիրաւորանքները եւ հիմա կռիւ են տալիս ՀՀՇ անուանման ու իրաւայաջորդի տիտղոսի համար: Երբ փորձում ես խորանալ, թէ ինչ վիրաւորանքներ են դրանք, պարզւում է՝ պարզ մարդկային, կենցաղային բնոյթի տարաձայնութիւններ են: Ոչ մի գաղափարական անհամաձայնութիւն: Գաղափարազուրկ հակասութիւնների մասին է վկայում նաեւ այն, որ ծայրայեղ հակադիր հայեացքների տէր մարդիկ մէկ էլ տեսնում ես՝ միաւորուեցին մի կազմակերպութեան շրջանակներում, դաշինքներ ստեղծեցին, երկխօսութիւն ծաւալեցին, մտերմացան նախկին հակառակորդի հետ: Բայց մեր քաղաքական դաշտի անսկզբունքայնութեան ամենավառ ապացոյցը մեր սեղաններն են, բարեկամական կապեր հաստատելու ֆանտաստիկ կարողութիւնը, երբ ՀՀՇ-ականն ու ՀՅԴ-ականը, ԲՀԿ-ականն ու ՕԵԿ-ականը, ՀՀԿ-ականն ու ժառանգականն այնպէս են սերտաճում, այնպէս են իրար պաշտպանում, թեւ ու թիկունք դառնում, որ հասկանում ես՝ գաղափարական ընդհանրութիւնը, սկզբունքների ու հայեացքների իրական միասնութիւնը հէնց սա է: Իսկ տարբեր բեմերից ու ամբիոններից հնչող քննադատութիւնները միմեանց հասցէին, իրար հետ հակամարտելու արտիստիկ փորձերը, իրար սխալներ չհանդուրժելու տեսարանները պարզապէս ակցիաներ են՝ ուղղուած հանդիսատեսին, իմա՝ հասարակութեանը:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# ԸՕ-ի բարեփոխումները նախապատրաստող խումբը չի քննարկում ընդդիմութեան առաջարկները

Նախագահ Սերժ Սարգսեանի կարգադրութեամբ Ընտրական օրէնսգրքի բարեփոխումները նախապատրաստող աշխատանքային խումբը մատների թանաքոտման եւ ընտրութիւններից յետոյ քուէարկած քաղաքացիների ցուցակները հրապարակման հարցը չի քննարկում:

Այս տեղեկութիւնը «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքում փոխանցեց նշուած աշխատանքային խմբի անդամ, Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչեանը:

Ընդդիմութիւնը, յիշեցնենք, այս առաջարկներն անում էր ընտրութիւնների թափանցիկութիւնն ապահովելու, առաջին հերթին՝ ուրիշի փոխարէն քուէարկելը բացառելու նպատակով:

Միջազգային դիտորդները եւս առաջարկել էին խնդրին լուծում տալ՝ ընտրողների ռեգիստրի նկատմամբ վստահութիւնը մեծացնելու համար:

Մուկուչեանն ասաց, թէ ընդդիմադիրները ընտրութիւնների ողջ ընթացքը յանձնաժողովում, տեղամասերում վերահսկելու լիարժէք հնարաւորութիւն ունեն:

Իսկ ցուցակների հրապարակումը կամ մատների թանաքոտումը չէ, որ, Մուկուչեանի կարծիքով, վախերը պէտք է ցրի. - «Մատների թանաքոտման ինստիտուտը որ երկրում որ կիրառուել է, այդ երկրում առաջացրել է շատ աւելի շատ խնդիրներ, քան նոյնիսկ այն մեխանիզմը, որը մեզ մօտ էր կիրառուում»:

ԿԸՅ-ի նախագահը փոխանցեց, որ աշխատանքային խումբը առաջարկութիւնները պատրաստելիս հիմնուում է անցած ընտրութիւններում դիտորդական առաքելութիւն իրականացրած ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի, միջազգային եւ տեղական կազմակերպութիւնների զեկոյցների, ինչպէս նաեւ Սահմանադրական դատարանի արտայայտած իրաւական դիրքորոշումների վրայ:



Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչեան

Կրկնակի քուէարկութիւնները բացառելու համար խումբը քննարկում է քուէարկութիւնը նոյնականացման քարտերով անցկացնելու հնարաւորութիւնը: Նոյնականացման քարտերի տրամադրման մասին օրէնքը 2 տարի առաջ է ընդունուել: Հարկ է, սակայն, նշել, որ այս տարուայ բիւջէով էլ դրանց տպման ու տրամադրման ծախսեր նախատեսուած չեն:

Ընտրական բարեփոխումները մշակող խմբում ընդգրկուած են բացառապէս պետական պաշտօնեաներ՝ Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեանի գլխաւորութեամբ: Քաղաքական ուժերի ներկայացուցիչներն առաջարկներին կարող են ծանօթանալ դրանք պատրաստ լինելուց յետոյ միայն՝ հանրային քննարկման ժամանակ, որը, Մուկուչեանի փոխանցմամբ, կը կազմակերպուի տարեվերջին:

# Ազատամարտիկները քննադատում են պաշտպանութեան նախարարին

Խարդախութեան մեղադրանքով մէկ ամիս առաջ կալանաւորուած ղարաբաղեան պատերազմի վետերան Վոլոդիա Աւետիսեանի փաստաբանն ու ազատամարտիկները քննադատում են պաշտպանութեան նախարարին՝ նրա հնչեցրած յայտարարութիւնների համար:

Նախարարը հերքել է այն պնդումները, թէ ազատամարտիկը կալանաւորուած է քաղաքական հայեացքների համար եւ պնդել, թէ գնդապետը փորձել է միջամտել Զինուած ուժերի համալրման հաշուառման խնդիրներին:

Փաստաբան Արա Զաքարեանի համոզմամբ՝ այդ յայտարարութիւններով նախարարը ոտնահարել է անմեղութեան կանխավարկածը.- «Հաշուի առնելով պարոն Սէյրան Օհանեանի զբաղեցրած պաշտօնը եւ այն հանգամանքը, որ գործը քննող մարմինը գտնուում է պաշտպանութեան նախարարութեան ենթակայութեան տակ, նման պայմաններում, ես կարծում եմ, որ պաշտպանութեան նախարարը կամ որեւէ կարծիք չպէտք է յայտնէր, կամ յայտնելու դէպքում շատ զգուշաւոր եւ չէզոք դիրքորոշում յայտնէր»:

Պաշտպանութեան նախարարը նաեւ նշել է, որ մինչ կալանաւորումը ինքը մի քանի անգամ հանդիպել է Աւետիսեանին, փորձել է ուղղութիւն տալ նրանց սոցիալական պայքարին ու պնդել, որ այս մասին առաջինը զեկուցուի նախարարութեանը: Աւետիսեանը, սակայն, ըստ նախարարի խախտել է այս պայմանաւորուածութիւնը: Իր եւ Աւետիսեանի միջեւ տեղի ունեցած շփումների մասին այլ մանրամասներ Սէյրան Օհանեանը չի հաղորդել: Փաստաբանի համոզմամբ, սակայն, այսքանն արդէն բաւարար է՝ պնդելու, որ իշխանութիւնները քաղաքական հետապնդում են իրականացնում:

«Ըստ էութեան, մեր պետութիւնը Վոլոդիա Աւետիսեանի նկատմամբ քրէական հետապնդում է իրականացնում իր քաղաքական գործունէութեան հետ կապուած: Նախարարի յայտնած դիրքորոշումից հետեւում է, որ Աւետիսեանը հանդիսանում է քաղբանտարկեալ»,-ասաց Զաքարեանը:

Փաստաբանը իր պնդումները հիմնաւորում է նաեւ նրանով, որ մէկ ամսից աւելի ճաղերի ետեւում գտնուող ազատամարտիկի հետ մինչ օրս քննչական որեւէ գործողութիւն չի կատարուել, տուժողների ու վկաների հետ առերեսում չի իրականացուել.- «Սրանից հետեւում է, որ իշխանութեանը ուղղակի պէտք էր Վոլոդիա Աւետիսեանին մեկուսացնել»:

Պաշտպանութեան նախարարի յայտարարութիւններին ի պատասխան՝ Աւետիսեանի ընկերները հակադարձում են՝ յայտարարելով, թէ նա փոխարէնը կարող էր լոյս սփռել այս գործի վրայ ու մինչեւ հիմա պատասխան չստացած մտահոգութիւնները փարատել: Օրինակ, ասել, թէ ով է այն քաղաքացին, ում բողոքի հիման վրայ մեղադրանք է առաջադրուել ազատամարտիկին: Աւետիսեանի ընկերները փորձել են գտնել այդ քաղաքացուն, բայց՝ ապարդիւն:

Յիշեցնենք, որ Վոլոդիա Աւետիսեանը կալանաւորուեց խարդախութեան համար: Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, նա խաբէութեան եւ վստահութիւնը չարաշահելու եղանակով քաղաքացի Հ. Զաքարեանի թոռանը պարտադիր ժամկէտային զինուորական ծառայութիւնից ազատելու հարցում աջակցութիւն ցոյց տալու պատրուակով 2000 ԱՄՆ դոլար է յափշտակել: Տասն օր առաջ էլ մեղադրանքը լրացուեց՝ խարդախութեան փորձի համար մեղադրանքով:

# Ծառուկեան - Բաղդասարեան հակամարտութիւնը շարունակւում է

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէն (ՀԱՕԿ), որի նախագահը Գագիկ Ծառուկեանն է, բաւականին սուր յայտարարութիւն է տարածել, որով «չի ընդունում եւ չի ճանաչում Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահի ընտրութեան արդիւնքները»:

Ինչպէս տարածած տեսաուղերձում պարզաբանել է ՀԱՕԿ-ի գլխաւոր քարտուղար Հրաչեայ Ռոստոմեանը, Վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահի ընտրութիւններն անցկացուել են մի շարք խախտումներով ու բացթողումներով: Մասնաւորապէս, ընտրութիւնն անցկացուել է «պետական կառոյցի անմիջական ներգրաւուածութեամբ եւ ազդեցութեան ներքոյ, ինչը անթոյլատրելի է եւ հակասում է օրէնքին»:

Խօսքն Ազգային անվտանգութեան խորհրդի շէնքի մասին է, որտեղ «խիստ գաղտնիութեան պայմաններում» Արթուր Բաղդասարեանն ընտրուել է Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահ:

Նա մատնանշում է մէկ այլ խախտում՝ ընդգծելով, որ ընտրութիւններն անցել են «գործադիր իշխանութեան ներկայացուցիչ՝ Սպորտի նախարարի ուղղակի մասնակցութեան պայմաններում», մինչդեռ «օլիմպիական կարեւորագոյն սկզբունքներից մէկը ֆեդերացիաների անկախութիւնն է գործադիր ու իշխանութեան այլ ճիւղերից անկախ գործելու պահանջը»:

Հաշուի առնելով այս եւ այլ խախտումները՝ ՀԱՕԿ-ը զգուշացնում է, որ «նմանատիպ խայտառակ ընտրութեան անցկացնելու որոշումը մարզական ոլորտում հանգեցնելու է միջազգային սկանդալի»՝ վտանգի տակ դնելով երկրի հեղինակութիւնը. - «Ոչ մէկի քմահաճոյքը չի կարող վտանգել մեր երկրի մարզական հեղինակութիւնը: ՀԱՕԿ-ը վճռական է հետամուտ լինել խնդրի իրաւական կարգաւորմանը եւ ամենակարեւորը՝ ՀԱՕԿ-ը սկսում է սահմանուած կարգով ֆեդերացիայի ետկանչը Վոլեյբոլի միջազգային ֆեդերացիայից»:

Ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարեանի խօսնակ Արթուր Միսակեանը «Ազատութեան» հետ զրոյցում պնդեց, թէ որեւէ խախտում տեղի չի ունեցել: Միսակեանը հաստատեց, որ Բաղդասարեանը Վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահ է դարձել Անվտանգութեան խորհրդի շէնքում, եւ պարզաբանեց. - «Որովհետեւ Վոլեյբոլի ֆեդերացիան դահլիճ որպէս այդպիսին չունի, իսկ մեր նիստերի դահլիճը շատ յարմարաւէտ է նման միջոցառում կազմակերպելու համար»:

«Պարոն Բաղդասարեանն այս պահին ընտրուած նախագահ է, իր առջեւ դրուած խնդիրներն է իրականացնում թէ որպէս Անվտանգութեան խորհրդի քարտուղար, թէ [որպէս] Վոլեյբոլի ֆեդերացիայի ընտրուած նախագահ», - եզրափակեց Արթուր Միսակեանը:

# «ՀՀՇ-ն խախտում չի կատարել»

ՀՀՇ անուանումով որեւէ կազմակերպութիւն չկայ գրանցուած: «Ա1+»-ին յայտնեց ՀՀՇ կուսակցութեան գործադիր քարտուղար Կարէն Կարապետեանը:

Նա յիշեցրեց, որ պետական ռեգիստրում գրանցուած է «Հայոց համազգային շարժում. Ազատականութեան տարածման եւ ժողովրդավարութեան զարգացում» անուանումով հասարակական կազմակերպութիւն, որի ղեկավարը Վահագն Հայոցեանն է:

Վերջինս յայտարարութիւն էր տարածել՝ նշելով, որ ՀՀՇ անուանումը եւ խորհրդանշանը պատկանում է իր ստեղծած հասարակական կազմակերպութեանը:

ՀՀՇ կուսակցութեան գործադիր քարտուղարի խօսքերով՝ նոյնիսկ արդարադատութեան ներկայացուցիչն է նշել, որ իրենց մօտ ՀՀՇ կուսակցութիւն չկայ գրանցուած, իսկ Վահագն Հայոցեանի հասարակական կազմակերպութիւնը այլ անուանում ունի, քան իրենց կուսակցութիւնը:

«Մենք յայտ ենք ներկայացրել զբաղուել լուրջ քաղաքական գործունէութեամբ, եթէ մենք ընկնենք ամէն մի մեկնաբանութեան ետեւից, դա բաւականին երկար եւ անարդիւնաւէտ ժամանակ կը խլի»,- նշեց նա:

Իսկ հանրապետական պատգամաւոր Մկրտիչ Մինասեանը դրական է գնահատում քաղաքական դաշտում նոր կուսակցութեան յայտնուելը:

«Ես չեմ ուզում ծնուած օրուանից երեխային բացասական իմաստով անուն տալ, միգուցե իրենք իրենց ժամանակին թոյլ տուած սխալները աւելի խորապէս կ'ուսումնասիրեն, այլեւս չեն կրկնի: Առաւել արդիւնաւէտ կը գործեն քաղաքական դաշտում՝ իրենց նպաստը բերելով երկրին եւ քաղաքական դաշտին»,- «Ա1+»-ին ասաց պարոն Մինասեանը:

# ԼՈՒՐԵՐ

## Դինքի սպանութեան գործի նոր քննութիւնում հնարաւոր է կտրուկ շրջադարձ

*Հրանդ Դինքի սպանութեան գործի նոր քննութիւնում հնարաւոր է կտրուկ շրջադարձ տեղի ունենայ, բացայայտուեն նոր անուններ, որոնք առնչութիւն են ունեցել 2007 թուականի Յունուարին «Ագոս»-ի խմբագրապետի սպանութեանը:*

*«Անադոլու» գործակալութիւնը, թուրքական միւս լրատուամիջոցները հաղորդեցին, որ նախօրէին ձերբակալուել է ոստիկանական ուժերի նախկին ինֆորմատոր, գաղտնի գործակալ Էրհան Թունջէլը, իսկ Ստամբուլի բարձրագոյն քրէական դատարանը նրան կալանելու որոշում է կայացրել: Ինքը Թունջէլը մամուլին տուած հարցազրոյցում յայտարարել է, թէ կը բացայայտի բոլորի անունները, ում հետ կապի մէջ է եղել, եւ մի շարք այլ ուշագրաւ յայտարարութիւններ է արել:*

*Էրհան Թունջէէլը Դինքի սպանութեան գործում այն հիմնական կասկածեալն է, որի միջոցով կարող է ապացուցուել պետական ապարատի կապը Դինքի սպանութեան հետ, գրում է Hurriyet Daily News-ը:*

*Յիշեցնենք՝ 2011 թուականին սպանութեան անմիջական կատարող Օգիւն Սամասթին Ստամբուլի դատարանը դատապարտել է 23 տարուայ ազատազրկման. յանցագործութիւնը կատարելու պահին Սամասթի 18 տարին չէր լրացել, եւ նա ստացաւ անչափահասների համար նախատեսուած առաւելագոյն պատիժը: Իսկ մէկ տարի անց Եասին Հայալը սպանութիւնը կազմակերպելու մեղադրանքով դատապարտուել է ցմահ ազատազրկման:*

*Դինքի սպանութեան գործով անցնում էին նաեւ մէկ տասնեակից աւելի կասկածեալներ, այդ թւում՝ նոյն Էրհան Թունջէլը, սակայն անցած տարի դատարանը արդարացրեց նրանց՝ գտնելով, որ որեւէ յանցաւոր կազմակերպութեան հետ կապեր ունենալու մեղադրանքները անհիմն են, Դինքի սպանութիւնը կատարողները գործել են միայնակ:*

*Այս տարուայ Մայիսին Թուրքիայի բարձրագոյն վերաքննիչ դատարանը չեղեալ համարեց այդ որոշումը եւ վճռեց նոր ընթացք տալ քննութեանը:*

*Թուրքիայի ամենայայտնի դատախազներից մէկը՝ Մուամեր Աքքաշը նշել էր, որ առաջիկայում Դինքի սպանութեան գործով անցնող բոլոր առանցքային դերակատարութիւն ունեցող անձինք կրկին կը հարցաքննուեն:*

*Անցած չորեքշաբթի, երբ Ստամբուլի առանձնատներից մէկում ձերբակալուեց Էրհան Թունջէլը, Star թերթը հրապարակել էր Թունջէլի հետ հարցազրոյցը:*

*Հարցազրոյցում Թունջէլն ասել է, թէ չի թաքնւում քննութիւնից, այլ նախապատրաստում է իր պաշտպանութիւնը, որն աւարտելուց յետոյ ինքը կը յանձնուի իրաւապահներին:*

*Նա բաւական ուշագրաւ յայտարարութիւններ է արել՝ ասելով, թէ կը բացայայտի բոլորի անունները, ում հետ կապ է ունեցել, ասել է, որ Դինքի սպանութեան գործում մեծ դերակատարութիւն է ունեցել ժանդարմերիան՝ ռազմական ոստիկանութիւնը: Մասնաւորապէս, նա մատնացոյց է արել Տրապիզոնի ժանդարմերիան, որի գաղտնի գործակալներից էր նախկինում:*

*Էրհան Թունջէլը նաեւ պնդել է, որ մի կազմակերպութիւն կա, որը կանխում է ճշմարտութեան բացայայտումը, չի թողնում, որ այդ գործի վրայ լոյս սփռուի, եւ նա պնդում է, որ այդ կազմակերպութիւնը մօտ է կանգնած պետութեանը եւ աւելի բարձր է, քան «Էրգենեկոն»-ը:*

*Նա յայտարարել է, թէ այդ ամէնի մէջ ինքն ընդամէնը փոքր օղակ է:*

*Երբ ոստիկանները ձերբակալուած Թունջէլին տանում էին ոստիկանական բաժանմունք, այնտեղ հաւաքուած լրագրողներին նա ասել է. - «Սա է այն գինը, որ վճարում եմ իմ երկրին ծառայելու համար»:*

## Հայաստանում դրական են տրամադրուած Վրաստանի նոր նախագահի նկատմամբ



*Իշխող Հանրապետականը Վրաստանի նոր նախագահի հետ եւս մտադիր է զարգացնել երկկողմ յարաբերութիւնները, խնդիրներն էլ լուծել միայն բանակցային ճանապարհով, այդ մասին «Ազատութեան» հետ զրոյցում ասաց կուսակցութեան խօսնակ, Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը՝ ընդգծելով, որ վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի՝ վերջերս Հայաստան կատարած այցի ընթացքում նման պատրաստակամութիւն է յայտնել նաեւ Վրաստանի նոր կառավարութիւնը:*

*Ինչ վերաբերում է հեռացող Սաակաշվիլիին, Շարմազանովը ձեռնպահ մնաց գնահատականներ հնչեցնելուց՝ նշելով, թէ այժմ դա կոռեկտ չէ:*

*«Անկախ նրանից՝ Հայաստանում կամ Վրաստանում ով կը լինեն իշխանութիւններ, մենք պէտք է մեր խնդիրները լուծենք բարեկամաբար եւ բացառապէս բանակցութիւնների միջոցով»,- ասաց Շարմազանովը:*

*Հայ-վրացական միջխորհրդարանական յանձնաժողովի անդամ, պատգամաւոր Էդմոն Մարուքեանի կարծիքով՝ Վրաստանում նախագահի փոփոխութիւնը ոչինչ չի փոխի, քանի որ իշխանափոխութիւնը, ըստ էութեան, տեղի էր ունեցել դեռեւս ամիսներ առաջ՝ խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ: Այս ընտրութիւններից յետոյ, ըստ Մարուքեանի, Վրաստանն ընդամէնը ամբողջութեամբ անցում կը կատարի կառավարման խորհրդարանական համակարգի:*

*«Մեզ համար ակնյայտ է, որ Իվանիշվիլիի այցը Հայաստանի Հանրապետութիւն եւ յարաբերութիւնների բարձր մակարդակում քննարկուած հարցերը եւ դրանց արձագանքները շատ դրական էին, հետեւաբար Վրաստանի նախագահի ընտրութիւններից յետոյ, ըստ էութեան, բան չի փոխուելու»,- ասաց պատգամաւորը:*

*Նոյն յանձնաժողովի անդամ, պատգամաւոր Թեւան Պօղոսեանն իր հերթին նշում է՝ կապ չունի թէ ով է Վրաստանում իշխանութեան ղեկին, մեր շահերից ելնելով Հայաստանը միշտ էլ պէտք է ձգտի լաւ յարաբերութիւններ պահպանել հարեւան երկրի հետ:*

*«Պէտք է կարողանանք գիտակցել, որ մեր խնդիրները պէտք է չպայմանաւորուեն Վրաստանի տեղի ունեցող ներքին փոփոխութիւններով, միշտ պէտք է կարողանանք ունենալ շատ ջերմ, բաց աշխատանքային յարաբերութիւններ»,- ասաց Թեւան Պօղոսեանը:*

*Պօղոսեանի կարծիքով՝ նոր իշխանութիւնը այսուհետ իր քաղաքականութեան մէջ հաշուի կ՚առնի նաեւ տարածաշրջանային խնդիրները եւ թերեւս չի նպաստի տարանջատմանը:*

*Կովկասի ինստիտուտի փոխտնօրէն, քաղաքագէտ Սերգէյ Մինասեանը «Ազատութեան» հետ զրոյցում Վրաստանում նոր նախագահի ընտրութիւնը դրական գնահատեց: Նրա կարծիքով՝ այսուհետ հարեւան երկրի արտաքին քաղաքականութիւնը կախուած է միայն վարչապետ Իվանիշվիլիի ղեկավարած դաշինքից, եւ նախկին պատմութիւնը այլեւս չի կրկնուի, երբ Սաակաշվիլին Հայաստանի հասցէին կոշտ արտայայտութիւններ էր թոյլ տալիս՝ անյարմար դրութեան մէջ դնելով երկրի կառավարութեանը:*

*«Ես կարծում եմ, որ առնուազն որոշ չափով կը մեղմուեն նաեւ վրաց-ռուսական յարաբերութիւնները: Այդ առումով հայ-վրացական յարաբերութիւնների խոչընդոտների կամ խնդիրների քանակը կը նուազի, եւ դա դրական կ՚ազդի Երեւանի եւ Թբիլիսիի միջպետական յարաբերութիւնների վրայ»,- ասաց քաղաքագէտը:*

*Մինասեանի կարծիքով՝ նոր իշխանութիւնը դրական է տրամադրուած նաեւ վիրահայութեան հանդէպ, ինչը, վերլուծաբանը, շատ կարեւոր է համարում:*

## Հայաստանի վրայ նոր ճնշումներ

*Շարունակուածէջ 1-էն*

*որ Մաքսային Միութեան միանալու Հայաստանի ցանկութեանը այդպէս ալ կը մնայ ցանկութիւն՝ Ատրպէյճանի հետ տարածքային չլուծուած հարցի՝ Լեռնային Ղարաբաղի պատճառով:*

*Նոյնպէս, Եւրազէսի Մինսքի մէջ վերջերս կայացած գագաթի ժողովի առթիւ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, Պելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկօն յայտարարած էր, որ Մաքսային Միութեան Երեւանի միանալու հարցի վերաբերեալ Հայաստան ունի չլուծուած տարածքային խնդիր, որու հետեւանքով Ատրպէյճանի կողմէ հարցեր կրնան յառաջանալ եւ պէտք է նկատի առնել Ատրպէյճանի կարծիքը:*

*Ընդդիմադիր շրջանակներու կարծիքով, Եւրոպական Խորհրդարանի ընդունած ոչ հայանպաստ բանաձեւը պատասխան էր Հայաստանի իշխանութիւններու՝ Մաքսային Միութիւն մտնելու որոշման կապակցութեամբ:*

*Հայ Ազգային Գոնկրէս խմբակցութեան պատգամաւոր Արամ Մանուկեանի համոզմամբ, նման կոշտ ձեւակերպմամբ բանաձեւ ընդունելով Եւրոպան կը պատասխանէ Հայաստանի իշխանութիւններուն, որոնք 4 տարի Եւրամիութեան հետ բանակցեցան Գործընկերութեան Համաձայնագիրի շուրջ, ապա անսպասելիօրէն յայտարարեցին Ռուսաստանի նախաձեռնած Մաքսային Միութեան միանալու մասին:*

*«Առաջին անգամ Եւրախորհրդարանը նշում է ՝ Արեւելեան Գործընկերութեան մէկ պետութեան կողմից մէկ այլ պետութեան գաւթումը խախտում է Արեւելեան Գործընկերութեան հիմնարար սկզբունքներն ու նպատակները: Այս ձեւակերպումը առաջին անգամ է յայտնւում: Սա պատասխան է եւրոպացիների կողմից Արեւելեան Գործընկերնութեան չորս տարուայ բանակցութիւններից հրաժարուելու համար: Պատահական չէ»,- ըսած է Մանուկեան:*

*Արամ Մանուկեան չէ բացառած, որ յառաջիկային ստեղծուի այնպիսի իրավիճակ, երբ իշխող վարչակարգը կրնայ զոհաբերել Լեռնային Ղարաբաղը իր իշխանութիւնը պահելու համար.- «Այս փաստաթուղթը 15 օր առաջ եղել է, մեր իշխանութիւնները իմացել են այս փաստաթղթի մասին, եւ Զօրիի նման լալկաններին առաջ են գցել՝ նախապատրաստելու հասարակական կարծիքը այս փաստաթղթի հետ կապուած, եւ բնականաբար, սրան հետեւող իրավիճակներին նախապատրաստելու հետ կապուած: Մինչեւ հիմա հազար ու մի բան զոհաբերել ենք՝ գոյք, սուվերենութիւն, ցեղասպանութիւն, արժանապատուութիւն: Հիմա ես վախենում եմ այդ մտքից, որ յաջորդ զոհաբերուող արժէքը լինի Ղարաբաղը: Եւ սրանով իրենք կարծես թէ նախապատրաստում են այն միջավայրը, որի դէպքում սա կը ներկայացուի հայ ժողովրդին»:*

*ԲՀԿ խմբակցութեան քարտուղար Նաիրա Զօհրաբեան, անդրադառնալով Եւրախորհրդարանի ընդունած բանաձեւին, յայտնեց, թէ տակաւին այդ փաստաթուղթի վերջնական տարբերակին չէ ծանօթացած, բայց եթէ իսկապէս Ղարաբաղի մասին նման կոշտ ձեւակերպումներ հնչած են, ապա բացատրութիւնը հետեւեալն է.- «Այո, բաւականին կոշտ ձեւակերպումներ են դրանք, եւ, այո, ինչ-որ տեղ մենք դա կարող ենք ընդունել՝ որպէս Սեպտեմբերի 3-ի կտրուկ շրջադարձի պատասխան»:*

*Եւրախորհրդարանը իր բանաձեւին մէջ նաեւ ափսոսանք կը յայտնէ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի՝ Մաքսային Միութիւն մտնելու որոշման կապակցութեամբ, ապա կը ցաւի, որ այդ որոշումը կայացուած է առանց Հայաստանի Խորհրդարանի մանրազնին ուսումնասիրութեան եւ հասարակութեան հետ բաց եւ թափանցիկ քննարկումներու:*

## ՍԴՀԿ-ՌԱԿ Տեսակցութիւն



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանին, Ժմմէյզէի «Թէքէեան» կեդրոնին մէջ տեսակցեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան պատուիրակութեան հետ, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ Մայք Խարապեանին: Ժողովին ներկայ էին ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան փոխ ատենապետ՝ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան, վարչութեան անդամ-ներ Ընկ. Տոքթ. Եղիկ Ճէրէճեան եւ Ընկ. Շաւարշ Ակինեան, ինչպէս նաեւ ՌԱԿ Կեդրոնական վարչութեան անդամներ Յովսէփ Էմիրեան, Փրոֆ. Հրայր Հովիւեան եւ Յարութ Երկանեան:

Ժողովակիցները արծարծեցին հայ ժողովուրդը յուզող եւ համատեղ հետաքրքրութիւն ներկայացնող նիւթերը: Մասնաւոր անդրադարձ կատարուեցաւ Հայոց ցեղասպանութեան 100 ամեակի ոգեկոչումի նախապատրաստութիւններուն, ձեռնարկները համազգային մակարդակի վրայ եւ համագործակցաբար կազմակերպելու հրամայականին, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները ամրապնդելու անհրաժեշտութեան եւ ղարաբաղեան հակամարտութեան հայանպաստ լուծում գտնելու հեռանկարներուն: Կեդրոնական վարչութիւններու պատուիրակութիւնները քննարկեցին Հայաստանի ներքին կացութիւնը, մասնաւորապէս կեդրոնանալով Հանրապետութեան տնտեսական իրավիճակին եւ ժողովուրդի դիմագրաւած մարտահրաւէրներուն վրայ: Փոխանակուեցան կացութիւնը բարելաւելու ուղղութեամբ առաջարկուած միտքեր: Ժողովակիցները նաեւ արծարծեցին սուրիահայութեան դիմագրաւած խնդիրները, Սուրիահայ գաղութը կանգուն պահելու եւ հայորդիներուն հրատապ օգնութիւններ ապահովելու անհրաժեշտութիւնը:

Որոշուեցաւ նմանօրինակ նիւթերու շուրջ քննարկումները շարունակել եւ համագործակցութեան խողովակները բաց պահել:

## ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Հանդիպումները





Շարունակուած էջ 1-էն

Կուսակցութեան պատուիրակութիւնը հոգեւոր պետերուն ներկայացուց Հայաստանի մէջ կայացած ՍԴՀԿ Ընդհանուր համագումարի արդիւնքները եւ ընտրուած վարչութեան անդամները: Հանդիպումներուն ընթացքին քննարկուեցան գլխաւոր երեք նիւթերը՝ Ցեղասպանութեան 100 ամեակի ոգեկոչումը, Հայաստանի իրավիճակը եւ սուրիահայութեան խնդիրները: Կուսակցութեան պատուիրակութիւնը շեշտեց Մեծ Եղեռնի յիշատակի ոգեկոչման ձեռնարկները կազմակերպուած միջոցներով մշակելու եւ համագործակցութեան վրայ հիմնուելու կարեւորութիւնը՝ հասնելու համար ցանկալի արդիւնքներու:

Խօսելով Հայաստանի կացութեան մասին, կեդրոնական վարչութեան անդամ ընկերները արծարծեցին երկրի տնտեսական կացութիւնը, ժողովուրդին առջեւ ցցուած մարտահրաւէրները եւ զանոնք լուծելու միջոցները, հիմնուելով Հայաստան-Սփիւռք համագործակցութեան վրայ:Այն ինչ կը վերաբերի սուրիահայութեան խնդիրներուն, ապա զրուցակիցները համակարծիք էին սուրիահայ զաւակներուն օգնութիւններ փոխանցելու եւ գաղութը ամէն միջոցներով կանգուն պահելու անհրաժեշտութեան շուրջ: Հանդիպումներուն ընթացքին շեշտուեցաւ երեք յարանուանութիւններու ղեկավարութեան հետ համագործակցութիւնն ու խորհրդակցութիւնը շարունակելու կարեւորութիւնը:

## Արցախի Փոխ Վարչապետը

Շարունակուած էջ 1-էն

քը փոխանցեց Արցախի Հանրապետութեան Փոխ Վարչապետ Արթուր Աղաբէկեանին, որ ի սկիզբ բանէ յայտնեց իր առաքելութեան յաջողութեան հանդէպ ունեցած խոր հաւատքը: Ան դիտել տուաւ թէ Արցախի առջեւ ծառացած ինքնապաշտպանութեան, բնակեցման եւ տնտեսական միջոցներու զարգացման մարտահրաւէրները իրենց դրական լուծումը կրնան գտնել Արցախ, Հայաստան եւ Սփիւռք համահայկական ուժգին միասնութեամբ:

Պրն. Աղաբէկեան դիտել տուաւ թէ այդ միասնութիւնն է, որ պիտի յաջողութեամբ պսակէ Հայաստան համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնի այս տարուայ ծրագիրը, որ անկիւնադարձային ռազմավարական նշանակութիւն ունի: Ծրագիրը կ'առաջադրէ Վարդենիս -Մարտակերտ ճանապարհի կառուցումը: Այս ծրագիրը կոչուած է Հայաստանը Արցախին միացնող այն նոր ուղին, որուն կարեւորութիւնը բնութագրեց ան, պատգամելով, որ ոչ մէկ զոհողութիւն պէտք է խնայուի զայն իրականութիւն դարձնելու համար, նամանաւանդ՝ երբ մեր օգտին չէ որ կը գործէ ժամանակը: Ատրպէյճանը մեծ թափով կ'սպառազինուի եւ ուղղակիօրէն կ'ահաբեկէ մեր ժողովուրդը: Ուստի, ազգովին պէտք է կատարենք հնարաւորը, Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի կառուցումը սկսելով 2014ին, աւարտելու համար 2015ին:

Պրն. Փոխ Վարչապետը նոյն կարեւորութեամբ շեշտեց ազատագրուած տարածքներու վերաբնակեցման պարագան, զոր իրականացնելու համար Արցախի մէջ հաստատած է վիճակախաղի ծրագիր, որ կոչուած է լուծելու վերաբնակեցման եւ աշխատատեղիներու ստեղծման ռազմավարական հարցերը: Նաեւ շեշտեց ան , որ այս վիճակախաղը պետական է, եւ շարունակական պիտի մնայ, ունենալով իրեն յատուկ իրաւական արժէք:

Պրն. Վարչապետը կոչ ուղղեց զօրավիգ կանգնիլ սկսուած վիճակախաղի տոմսերը գնելով: Գոյացուցած գումարները միանշանակ պիտի տրամադրուին վերաբնակեցման եւ աշխատատեղիներու ստեղծման ռազմավարական նպատակներու իրագործման:

Համաձայն Պրն. Փոխ Վարչապետի համոզումին, որ եթէ տարեկան հազար տուն կառուցուի, ապա հազար ընտանիք կը տեղափոխուի Արցախ: Վիճակախաղի տոմսերու վաճառքի գումարներով կը նախատեսուի առանձնատուներ կառուցել ազատագրուած տարածքներու վրայ Քաշաթաղի, Հադրութի մէջ, Արաքսի հովիտի երկարութեան եւ մեր հայրենակիցներուն հնարաւորութիւն տալով բնակելու այն տեղերը: Պէտք չէ մտահան ընել նաեւ այն պարագան, որ այսօր մեծ է թիւը Սփիւռքէն եւ Հայաստանէն, որոնք կ'ուզեն գալ Արցախ ու ապրիլ արիւնով ազատագրուած հողերուն վրայ: Պետութիւնը ինչ որ կերպով պէտք է նպաստէ անոնց ցանկութեան ապահովելով տուն եւ աշխատատեղի:

Պրն. Վարչապետը դիտել տուաւ որ Քալիֆորնիայի հայ համայնքը, իր գործնական մասնակցութիւնը պէտք է բերէ վիճակախաղի խաղարկութեան: Ձեռք բերուած արդիւնքներու ամփոփումէն ետք, տարեվերջին, յստակ կ'իմանանք, թէ որքան գումար պիտի յատկացուի բնակարանաշինութեան: Ըստ նախնական հաշուարկներուն, առնուազն 250 մլն. դրամ պիտի յատկացուի այդ նպատակին: 2014թ.ի առաջին եռամսեակին կը սկսի շինարարութիւնը: Իւրաքանչիւր հայ, որ կը ցանկայ մասնակից դառնալ ռազմավարական մեծ նշանակութիւն ունեցող այս ծրագրին՝ պէտք է ունենայ վիճակախաղի տոմս:

Պրն. Աղաբէկեան համոզում յայտնեց՝ որ Արցախի 145 հազար հաշուող բնակչութեամբ պէտք է գործել այնպէս, որ ցոյց տրուի շրջապատին, որ այդ հողին վրայ ապրելու մեր ցանկութիւնը հաստատ է, եւ ոչ մէկ նախայարձակում կրնայ ազդել Արցախի հայրենաբնակներու ծրագիրներու իրականացման վրայ: Իր խօսքի աւարտին, Պրն. Փոխ Վարչապետը դիտել տուաւ, թէ Հայրենիքի սէրը արտայայտելու լաւագոյն ձեւը՝ նպաստել է նաեւ այն հայրենակիցներուն, որոնք ցանկութիւն ունին գալ Արցախ եւ շէնցնել զայն:

www.massisweekly.com

## ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱՒ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ 1650 ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ



Պըրպէնքի Ուիտըըրի համալսարանի հանդիսասրահը կրկին ժամադրավայրը դարձած էր գաղութիս մտաւորականութեան եւ գրասէր հասարակութեան ներկայացուցիչներու ընտրանի հոյլին:

Արդարեւ Հոկտեմբեր 26, 2013, առաւօտեան ժամը 9էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 5, հայաբոյր մթնոլորտի ներքեւ էր համալսարանի «Ֆլէչըր Ճոնզ» հանդիսասրահը մէջ: Նոյն այս վայրին մէջ տարի մը առաջ, տեղի ունեցած էր նաեւ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Հիմնադրութեան 125 ամեակին նուիրուած պատմական այլ գիտաժողով մը, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան:

Այս տարուան գիտաժողովի բնոյթը տարբեր էր: Ան նուիրուած էր հայ ժողովուրդի երկրորդ լուսաւորիչ մեր ոսկեղնիկ տառերու գիւտարար՝ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1650 ամեակին:

Գիտաժողովին ներկայ եղող շուրջ 200 մասնակիցներուն մէջ կը գտնուէին հարաւային Գալիֆորնիոյ տարբեր համալսարաններու հայագիտական ամպիոններու դասախօսներ, մտաւորականներ, գրողներ, ուսուցիչներ, մշակութասէր հասարակութեան եւ մամուլի ու հեռատեսիլի ներկայացուցիչներ:

Սոյն գիտաժողովի կազմակերպողներն էին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Արարատ Էսքիճեան Թանգարանը, Համազգային Հայկական Կրթական եւ Մշակութային Ընկերակցութիւնը, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը եւ Պոլսահայ Միութիւնը:

Կազմակերպիչ Մարմնի անունով ելոյթ ունենալով Յարութ Տէր Դաւիթեան, ներկաները ողջունելէ ետք՝ խօսքը տուաւ Ուիտըըրի համալսարանի փոխ տնօրէն Դոկտ. Տան Սէնթ Գլէր: Ան դրուատանքով արտայայտուեցաւ Հարաւային Գալիֆորնիա հաստատուած հայ գաղութի օգտաշատ ներդրումներուն եւ ուրախութեամբ ընդգծեց որ համալսարանի ուսանողներուն 20 առ հարիւրը հայերէ կը բաղկանան: Ապա համալսարանի նախագահի եւ պաշտօնէութեան անունով իր շնորհաւորութիւնները փոխանցեց սոյն սեմինարի կազմակերպիչներուն:

Իր բացման խօսքին մէջ Յարութ Տէր Դաւիթեան պանծացուց Մեսրոպ Մաշտոցը իր հանճարեղ գիրերու գիւտով եւ իր գործին սատարող աշակերտներու հոյլով: Ապա անդրադառնալով համաշխարհային ներկայ ցնցումներուն եւ համացանցի յեղափոխութեամբ բազմատեսակ ազդեցութիւններուն՝ անհրաժեշտ սեպեց հետապնդումը նորօրեայ զարթօնքի մը: Ան ընդգծեց որ պէտք է զարկ տալ ազգային մտածողութեան «...եթէ ամէն մէկ հայ անհատ հաւատայ, որ կրնայ տարբերութիւն մը դնել իր գազի վիճակի բարելաւման գծով այնժամ կարելի կը դառնայ նորօրեայ զարթօնքի կերտումը: Ուրեմն հաւատանք ու գործենք այդ գիտակցութեամբ ու ոգիով եւ թող այս գիտաժողովը, իրմէ բխելի գործնական թելադրութիւններով, կարեւոր քայլ մը ըլլայ այդ նպատակի իրագործման ճամբուն վրայ»:

Շար.ը էջ 18

## Ս.Դ.Հ.Կ.Ի ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՀԵՏ



Հինգշաբթի 24 Հոկտեմբերին, 2013 կ.ե. ժամը 3ին, նախապէս առնուած ժամադրութեամբ մը, Սոց. Դեմկ. Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, հանդիպում մը ունեցաւ այս օրերուն Լոս Անճելոս այցի եկած Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենպ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանին: Ս.Դ.Հ.Կ. պատուիրակութեան մաս կը կազմէին Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան, Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Գաբրիէլ Մոլոյեան, ինչպէս նաեւ «Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր ընկ. Տօքթ. Արշակ Գազանճեան: Սոյն հանդիպման իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Պատրիարք հօր գաւազանակիր եւ Երուսաղէմի Ս. Թարգմանչաց Վարժարանի տնօրէն Հոգշ. Նորայր Վրդ. Գազազեան:

Շուրջ մէկ ժամ տեւող այս տեսակցութեան ընթացքին տեղի ունեցաւ սրտբաց զրոյց: Պատրիարք Նուրհան Արք. համապարփակ գեկոյց տուաւ տեղւոյն հայ գաղութի, Ս. Յակոբայ վանքի միաբանութեան, Երուսաղէմի հայապատկան սրբատեղիներու եւ կալուածներու այժմու իրավիճակի, միջ-եկեղեցական փոխ-յարաբերութեանց, վանքէն ներս ցարդ կատարուած բարեփոխութիւններու եւ յառաջիկայ ծրագիրներու մասին: Ան ուրախութեամբ նշեց որ տեղւոյն Սրբոց Թարգմանչաց վարժարանի աշակերտութեան թիւը 90-էն բարձրացած է 145ի:

Գալով Էջմիածին-Երուսաղէմ փոխադարձ յարաբերութեանց՝ Նուրհան Պատրիարք իր անխախտ հաւատարմութիւնը վերահաստատեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ: Այսուհանդերձ իր վերապահութիւնը յայտնեց հոգեւոր Գերագոյն Խորհուրդի գործելաոճի կարգ մը երեսներուն վրայ: Նաեւ, որոշ հիասթափութիւն մը՝ վերջերս Էջմիածնի մէջ տեղի ունեցած Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ Եպիսկոպոսական ժողովին մասին:

Պատրիարք Սրբազան հօր պատգամն է ըլլալ հաւատաւոր քաղաքացիներն այս երկրին, գուրգուրալ մեր ազգային արժէքներուն վրայ, միշտ պահպանել մեր ազգային միասնութիւնն ու համերաշխութիւնը:

Նուրհան Պատրիարք դէպի Երուսաղէմ իր վերադարձի ճամբուն վրայ մէկ շաբաթ պիտի մնայ ԱՄՆ-ի Արեւելեան շրջանը:


ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680



16th International Armenia Fund

# Telethon 2013

**NOVEMBER 28**
**Thanksgiving Day**




# Դէպի Արցախ

# En Route Artsakh

Scan Below and Donate **$10!**

**Text ARMENIA to 50555 to give $10 to Armenia Fund Inc. Reply with YES to confirm your donation.**

$10.00 donation to Armenia Fund Inc. Charges will appear on your wireless bill, or be deducted from your prepaid balance. All purchases must be authorized by account holder. Must be 18 years of age or have parental permission to participate. Message and Data Rates May Apply. **Text STOP to 50555 to STOP. Text HELP to 50555 for HELP.** Full Terms: mGive.org/T. Privacy Policy: mGive.org/P

| City-State-Region | Station | Digital Channel | Cable Channel | Satellite | Time |
|---|---|---|---|---|---|
| Northern California San Francisco & Bay Area | KTSF Channel 26 | 26.1 | AT&T U-VERSE Channel 8<br>CHARTER Channel 98<br>COMCAST Channel 8, 16, 20, 21, or 26 | DIRECTV 893<br>DISH 26 or 8237 | 8am to 7pm PST |
| Central California Fresno and Mid-State | KGMC Channel 43 | 43.1 | COMCAST Channel 10<br>AT&T U-VERSE Channel 43 | DIRECTV 43<br>DISH 43 | 8am to 8pm PST |
| Southern California Greater Los Angeles Area | KSCI Channel 18 | 18.1 | AT&T U-VERSE Channel 18<br>VERIZON FIOS Channel 18<br>Major Cable Systems Channel 18 | DIRECTV 18<br>DISH 18 | 8am to 8pm PST |

For all other locations please tune in to our live webcast at

8:00am-8:00pm PST

**webcast www.ArmeniaFund.org**

twitter.com/ArmeniaFund | facebook.com/ArmeniaFund | YouTube.com/ArmeniaFundUS

**1-800-888-8897**

Designed by EdiDesign.com

## ԱՄԵՆ. Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

Երուսաղէմի Հայոց նորընտիր Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան, ընկերակցութեամբ Հոգչ. Տ. Նորայր Վրդ. Գազազեանի, Հինգշաբթի, Հոկտեմբեր 17ի կէսօրէ յետոյ ժամը 4:30ին ժամանեց Լոս Անճելըսի Միջազգային Օդակայանը եւ սիրալիր կերպով դիմաւորուեցաւ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի, Թեմիս Նախորդ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեանի եւ պատուիրակութեան մը կողմէ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր ողջոյնի եւ բարի գալստեան խօսքը ուղղեց Սրբազան Պատրիարք Հօր, ապա իրեն ընկերացող Հայր Սուրբին հետ առաջնորդուեցան դէպի հիւրանոց:

Կիրակի, Հոկտեմբեր 20ի առաւօտեան ժամը 10:30ին Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի հրաւէրով եւ Սրբազան Պատրիարք Հօր հաւանութեամբ, Սուրբ Պատարագ մատուցեց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան երիտասարդ անդամ՝ Հոգչ. Տ. Նորայր Վարդապետ Գազազեան, որ 2000 թուին Կուսակրօն Քահանայ ձեռնադրուած է:

Սուրբ Պատարագի խորուրդին հանդիսապետեց Սրբազան Պատրիարք Հայրը: Արարողութեանց մասնակցեցան Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան, Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան, Գերշ. Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Թաբաքեան, Հոգչ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան, Հոգչ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Հոգչ. Տ. Նորայր Աբեղայ Զարգարեան, որ հիւրաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն կ՚այցելէ Արեւմտեան Թեմը, Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան, Արժ. Տ. Սիփան Աւագ Քհնյ. Մխսեան, Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհնյ. Թաթուլեան, Արժ. Տ. Վարդան Աւագ Քհնյ. Գասպարեան եւ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպազեան:

Սուրբ Պատարագի երգեցողութիւնը ներդաշնակ կերպով կատարեց Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը՝ ղեկավարութեամբ բազմավաստակ Դպրապետ՝ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի եւ երգեհոնահարութեամբ Տիար Գեղամ Աչճեանի:

Երգչախումբի կողմէ «Հրաշափառ» շարականի երգեցողութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հայրը դէպի խորան առաջնորդեց Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը:

«Հայր Մեր»ի երգեցողութենէ առաջ, Երգչախումբի կողմէ երգուած «Ուրախ Լեր» շարականի ընթացքին, Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպազեան ափսէի մէջ դրուած Հայրապետական Սրբատառ Կոնդակը ի ձեռին ունենալով, թափօրով դէպի Մայր Տաճարի Դասը առաջնորդեց Տէր եւ Տիկին Նահապետ եւ Անի Մելքոնեանը, ապա Սուրբ Խորան բարձրանալով ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին յղած Սրբատառ Կոնդակը:

Առաջնորդ Սրբազան Հայրը Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Պատուոյ Շքանշանի պարգեւատրումը կատարեց Պրն. Նահապետ Մելքոնեանին, ապա գոհունակութեամբ անդրադարձաւ իր կատարած քառասնամեայ ազգանուէր եւ եկեղեցանուէր ծառայութիւններուն եւ շեշտեց իր գլխաւորութեամբ Երուսաղէմի Հայոց Միութեան կատարած օգտակար ծառայութիւնները՝ Պատրիարքութեան եւ Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանին եւ բարեմաղթութիւններ կատարելով իր ջերմագին շնորհաւորութիւնները փոխանցեց:

### ՕԾՈՒՄ ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ Տ. ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆԻ ՁՕՆՈՒԱԾ ԽԱՉՔԱՐԻ

Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Գերշ. Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Թապագեանի հատորին շնորհանդէսը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 23-ին, երեկոյեան ժամը 7-ին Առաջնորդարանի Արմէն Համբար Հանդիսասրահին մէջ: Հանդիսավար՝ Տէր Յովսէփ Աւ. Քհնյ Յակոբեանի կողմէ: Բացումը կատարեց Սեւան Սրկ. Փալանճեան եւ հակիրճ կերպով ներկայացուց Տէր Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեանի կենսագրականը: Առաջնորդ Սրբազան Հայրը կը ներկայացնէր Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան:

Գիրքը համապարփակ եւ հանգամանալից կերպով ներկայացուց Գերշ. Տ. Եփրեմ Արքեպս. Թապագեան, որ ի միջի այլոց ըսաւ. «Հատորը աչքառու է Տ.Տ. Գէորգ Ե. Սուրէնեանց Ամենայն Հայոց Կաթո-

Շար.ը էջ 18

## ԱՄԷՆ ՄԱՐԴ ԻՐ ՊԱՐՏԷԶՆ ՈՒՆԻ...

Ռ. ԿՈՐԻՒՆ

Այդ պարտէզը կազմաւորւում է նախքան երեխայի ծնունդը, երբ նա մօր որովայնում լսում է իր անմիջական շրջապատի ձայները, որոնք նրա ապագայ ձեւաւորուելիք բնաւորութեան, հոգեբանութեան եւ խառնուածքի վրայ ազդեցութիւն են թողնում, եթէ նրա շրջապատի այդ մթնոլորտը յագեցած լինի հանդարտ, մեղմ ու հաճելի զրոյցներով, կամ նոյնիսկ երաժշտութեամբ եւ շինիչ զրոյցներով, այդպիսով երեխայի մէջ հիմնաւորւում է դրական մարդ-անհատը՝ խաղաղ, համբերատար, մտածող եւ խնդիրներին ուշադիր: Այս երեւոյթը արդէն իսկ գիտականօրէն հաստատուած է : Անշուշտ դա վերջնական արդիւնք չէ, երեխայի մեծանալու հետ զուգահեռ տարբեր ազդակներ՝ ինչպէս ընտանեկան, միջավայրի եւ ուսման, կերտում են ապագայ մարդը սեփական պարտէզով:

Ըստ «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր՝ դոկտ. Արշակ Գազանջեանի՝ «Ամէն մարդ իր պարտէզն ունի», որը զարդարւում է մանուկ հասակից սկսեալ ծնողների հոգածութեամբ, ապա մտքի եւ հոգու զարգացմամբ: Նոյն հաւաքականութեան, ազգի, ժողովրդի անդամներն ունեն միանման արժէքներ՝ պահանջներ, նպատակներ եւ երազանքներ, որոնց նկատմամբ զգայնութիւնն ու նախանձախնդրութիւնը պատուաւոր գոյութեան համար ամհրաժեշտ են: Մեր շրջապատում տեսնում եւ նկատում ենք ազգային-հասարակական գործիչներ, քաղաքական դէմքեր, արուեստագէտներ, որոնք իրենց անձնական գործերից բացի սիրով նուիրուած են՝ հայրենիքի, ժողովրդի եւ մշակոյթի բարգաւաճման գործին: Այս տեսակ շնորհքը, տաղանդը , հոգեբանութիւնը եւ նուիրուածութիւնը որտեղի՞ց է առաջանում, անկասկած՝ դաստիարակութիւնից, սեփական պարտէզը կառուցելու ժամանակից: Որքան ուշադիր եւ բծախնդիր լինենք մեր պարտէզի նկատմամբ, այդքան կունենանք գեղեցիկ եւ գրաւիչ պարտէզ:

Պարտէզ ասելով հասկանում ենք՝ մարդու աշխարհը իր մտածելակերպով, կենսակերպով եւ ապրելակերպով, որոնք ձեւաւորւում են երեւոյթների, ազդակների, ներշնչումների, ընկալումների... ազդեցութեան ներքոյ դառնալով հանճարեղ, տաղանդաւոր, նուիրեալ, բարեհոգի եւ այլն:

# ԱՆՈՒԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻՍՏԸ ԵՒ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԸ

ԱՒԵՏԻՍ ԲԱՑՐԱՄԵԱՆ

Վերջերս լրացաւ հայ անուանի ֆուտբոլիստ, ԽՍՀՄ սպորտի վարպետ, ՀԽՍՀ վաստակաւոր մարզիչ Յովսէփ Ասատրեանի 90-ամեակը: Լոս Անճելոսի հայկական թերթերում նրա մասին շատ գրուեց, նա բազմաթիւ շնորհաւորական հեռագրեր է ստացել աշխարհի տարբեր կողմերից եւ ի հարկէ Հայաստանից:

Մենք միշտ կապի մէջ ենք յարգելի Ասատրեանի հետ:

1953 թ., 13 տարեկան հասակում առաջին անգամ ոտք դրեցի մարզադաշտ Երեւանի «Տինամօ»ի խաղը դիտելու եւ վարակուեցի այդ խաղով: Ես այն երջանիկներից եմ, որ տեսել եմ մեր բոլոր անուանիների խաղերը: Մեր բարեկամներից մէկի՝ Սեդրակ Ճերեճեանի հարսանիքին բոլորը սպասում էին Յովսէփ Ասատրեանի երեւալուն: Նա եկաւ, աշխոյժ, երիտասարդ, մարզական կեցուածքով եւ շնորհաւորելով երիտասարդ զոյգին եւ հարազատներին, դուրս եկաւ: Գնում էին Թբիլիսի՝ տեղի բանակայինների հետ հանդիպման:

Իմ՝ ֆուտբոլասէրիս համար, դա մեծ բաւականութիւն էր, մօտիկից տեսնելու մեր թիմի աւագին: Դրանից յետոյ, երբ ես պոլիտեխնիկականում էի աշխատում նրա տղան իմ ուսանողներից էր: Այնուհետեւ գալով ԱՄՆ, մենք աւելի մօտեցանք եւ «Նոր Օր» թերթում իմ առաջին հարցազրոյցը 1998 թ. Հոկտեմբերի 15ին կայացաւ հենց Յովսէփ Ասատրեանի հետ, որի հետ մինչ օրս սերտ կապերի մէջ ենք:

Ես աւելի շատ ուզում եմ պատմել Ասատրեանի մարզական յաջողութիւնների մասին, չնայեած նա աւելի շատ մտաւորական մարզիկ է: Այսպէս, 1944ին աւարտել է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, յետոյ ուսանել է Պէյրութի Ամերիկեան Համալսարանում, իսկ երկու տարի անց, 1946ին տեղափոխուել է Հայաստան, որտեղ ուսումը շարունակել է Երեւանի Պետական Համալսարանի քիմիական բաժնում, որն աւարտել է 1949ին: 1953ին աւարտել է օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի անգլիական բաժինը, իսկ այնուհետեւ՝ Երեւանի ֆիզկուլտուրայի ինստիտուտը՝ 1960ին: Տիրապետում է մօտ ութը լեզուների:

Հայկական մարզական կեանքում դժուար է մտաբերել մէկ այլ մարզիկի, որն այդքան մտաւորական թեքում ունենայ:

Մարզկան հանդէս է եկել Ամերիկեան Համալսարանի թիմում, մարզել է Պէյրութի «Բաղրամեան» թիմը: 1946 թ. Երեւան ժամանելուց երկու շաբաթ ետք, նրան ընդունեցին Երեւանի «Տինամօ» ֆութպոլայի թիմ:

«Տինամօ»ում մեր մարզիչը ռուսախօս էր եւ ինձ, որպէս թարգմանիչ, շատ էր օգնում վաղուց հայրենադարձուած տաղանդաւոր ֆութպոլիստ Յակոբ Ջալիկեանը», ասում է Յովսէփը: Պէտք է նշեմ, որ հայրենադարձները միանալով հայրենի ֆութպոլիստներին, նոր աւիւն հաղորդեցին հայաստանեան ֆութպոլին:

Բացի Ասատրեանից որոշ ժամանակ անց Հայաստան ներգաղթեցին «Բաղրամեան» ակումբի եւս մի քանի խաղացողներ եւ Յովսէփը նրանց ներկայացրեց «Տինամօ»ի ղեկավարներին: Որոշ ստուգողական, փորձնական խաղերից յետոյ, Հայկ Մարմիրեանը, Քաջայր Փոլատեանը, Պետրոս Գալաքեանը նոյնպէս ընդգրկուեցին թիմում: «Աշխատանքային Ռեզերվներից», Յովսէփի խորհրդով, յաջորդ տարի թիմում ընդգրկեցին Մանուկ Սեմերճեանին եւ Յարութիւն Քեհէեանին: Եւ արդէն 1949ին «Տինամօ»ն հանդէս էր գալիս բարձրագոյն խմբում եւ բաւականին հետաքրքիր թիմ էր: «Մենք երկար ժամանակ կը մնայինք բարձրագոյն խմբում, եթէ ՀԽՍՀ-ի մարզական ղեկավարները յաճախակի մարզիկներ չփոխէին: Մինչեւ 1955ի վերջը, այսինքն իմ ակտիւ ֆութպոլին հրաժեշտ տալը փոխուել են ութը մարզիչներ», յիշում է Ասատրեանը:

1949ին բարձրագոյն խմբին հրաժեշտ տուեցինք խորհրդային խորթ բարքերի շնորհիւ: 1949ի վերջին խաղում երեւանցիները ընդունել էին Մոսկուայի իրենց ակումբակիցներին: Առաջին խաղակէսի աւարտից յետոյ երեւանցիները յաղթում էին 3-0 հաշուով:

«Այդ խաղը լաւ եմ յիշում», ասում է Յովսէփը: Մոսկուայի «Տինամօ»ի յաղթանակի դէպքում նրանք դառնում էին ախոյեան, իսկ պարտութեան եւ Մոսկուայի բանակայինների յաղթանակի դէպքում՝ բանակայիններն էին դառնում ախոյեան: Ընդմիջմանը Մոսկուայի (Ներքին գործերի նախարարութիւնից) հրահանգ եկաւ, որ մենք պէտք է պարտուենք: Ի հարկէ մարզիչները մեզ այդ մասին չասացին, բացի մի քանի վստահելի ֆութպոլիստներից: Ընդմիջումից յետոյ մարզիչը փոխեց մի քանի ֆութպոլիստի վնասուածքի եւ այլ պատճառաբանութեամբ, մրցավարներն էլ իրենց գործը արեցին եւ մենք պարտուեցինք 3-4 հաշուով եւ գնդակների վատ յարաբերութեամբ դուրս մնացինք բարձրագոյն խմբից, բայց մնալով Բ. խմբի ուժեղագոյն թիմերից մէկը: Դրա վառ ապացոյցն էր 1954 թ. Երեւանի «Սպարտակ»ը, («Տինամօ»-ն վերանուանեց «Սպարտակ») դուրս եկաւ ԽՍՀՄ գաւաթի եզրափակիչ, առաջին անգամ Բ. խմբի ներկայացուցիչը դուրս էր եկել եզրափակիչ: Մինչ այդ մենք յաղթել էինք Մոսքուայի եւ Դոնեցքի «Շախտիոր», Մինսկի «Սպարտակ» եւ Դնեպրոպեստրովսկի «Մետալուրգ» թիմերին: Եզրափակիչում մեր մրցակիցն էր Քիեւի «Տինամօ»ն:

Մրցավար Լաթիշեւի օգնութեամբ գաւաթը գնաց Քիեւ, որպէս նուէր Ուքրանիան Ռուսաստանին միաւորման 300րդ տարեդարձին: Մենք պարտուեցինք 1-2 հաշուով: Յովսէփ Ասատրեանը 1951ից թիմի աւագն էր, որը հետագայում նրա հետ չար կատակ խաղաց...:

1955ին Բ. խմբի առաջնութեան վերջին օրը «Սպարտակ»ը պէտք է ընդունէր իր գլխաւոր մրցակից՝ Ավերդլովսկի բանակային թիմին, որը «Սպարտակ»ից մէկ միաւոր աւելի ունէր: Մեզ հարկաւոր էր միայն յաղթանակ՝ բարձրագոյն խումբ անցնելու համար:

Երեւանցիները բոլոր հնարաւորութիւնները ունէին կատարելու իրենց երկրպագուների փայփայած երազանքը: Սակայն դա ակնյայտօրէն կասկածների տեղիք տուեց այն բանից յետոյ, երբ պարզուեց, որ խաղի օրը ռուստովցի մրցավար Սամոլազովին յանկարծ փոխարինեց մերձմոսկուացի Շեւցովը, որը կարգով ցածր էր: Ամենավատ գուշակումներն, աւաղ, իրականութիւն դարձան մրցավարն իր սեւ գործը կատարեց: Երբ հաշիւը 2-2 էր, ու վերջին րոպէներն էին, Յարութիւն Քարաջեանը, ստանալով Ասատրեանի լաւ փոխանցումը, շրջանցեց մի քանի պաշտպանների ու գնդակը ուղարկեց բանակայինների դարպասը:

Մարզադաշտը ցնծութեան մէջ էր, թուաց թէ երանելի յաղթանակը ձեռք է բերուել: Բայց Շեւցովը կոլը չհաշուեց, ինչպէս յետոյ նա պատճառաբանեց նրանով, որ Քարաջեանը իբր հրել է մրցակցին:

Թէ ինչ կատարուեց այդ խաղից յետոյ, շատ է գրուել՝ յիշեցնենք միայն եւ մարզադաշտում եւ Երեւանի փողոցներում, ի նշան անարդարութեան, տեղի ունեցան անկարգութիւնների եւ որպէս հետեւանք՝ ձեռբակալութիւններ: Տուժեցին շատ պաշտօնեաներ աշխատանքից ազատուեցին մի շարք կուսակցական, քաղաքային, մարզական եւ ոստիկանական ղեկավար աշխատողներ. ազատուեց եւ թիմի աւագը: «Սովետական Հայաստան» օրաթերթում տպագրուեց մի յօդուած, որ նկարագրում էր մրցման ընթացքը՝ մատնանշելով մրցավարի առանձին կոպիտ սխալները եւ հիմնականում ամբաստանելով աւագին, այսինքն՝ Յովսէփին, որը դաշտի կենտրոնում դժգոհութիւն յայտնելով իբրեւ թէ ձեռք չի տուել մրցավարին, աւելին թքել է երեսին: Յօդուածն աւելացնում էր՝ «Ինչպէ՞ս կարելի է ամբողջ հինգ տարի տղաների դաստիարակութիւնը վստահել Յովսէփ Ասատրեանին»:

«Հետագայում հանդիպելով յօդուածի հեղինակին՝ պարզեցի, որ այն պատուէրով էր գրուել», յիշում է Յովսէփը:

Եւ այսպէս Յովսէփ Ասատրեանը, ով աչքի է ընկել ոչ միայն տեխնիկական նուրբ հնարքներով, խաղային բարդ իրավիճակների ճիշդ գնահատումով եւ կողմնորոշուելու անսովոր շնորհքով, շրջահայեցութեամբ, բարձր կարգապահութեամբ եւ ով կարող էր դեռեւս մեծ օգուտ տալ հայաստանեան ֆութպոլին՝ հեռացուեց ակտիւ ֆութպոլից: Եւ, այնուհետեւ, սա չընկճեց Յ. Ասատրեանին՝ նա չհեռացաւ ֆութպոլից, անցաւ մարզչական աշխատանքի, իսկ «Արարատ»ի ոսկէ տարիներին վարեց պետական մարզչի պաշտօնը հանրապետական սպորտկոմիտէում, ասել է թէ ղեկավարեց ամբողջ ֆութպոլային տնտեսութիւնը Հայաստանում:

Այնպէս որ նա լիովին կարող է համարուել արարատցիների յաջողութիւնը կերտողներից մէկը:

Նշենք նաեւ, որ մինչեւ 1970 թուականը մարզել է Երեւանի «Սպարտակ», «Նայիրի» եւ Հոկտեմբերեանի «Սեւան» թիմերը: 1966-67 թթ. որպէս մարզիչ աշխատել է սիրիայում եւ Լիբանանում: 1977-82 թթ. դասախօսել է Քաբուլի (Աֆղանիստան) ֆիզկուլտ ինստիտուտում, միաժամանակ մարզել է թիմ, որը դարձել է Աֆղանիստանի ախոյեան:

1983ից աշխատել է ՀԽՍՀ Սպորտկոմիտէում որպէս ազգաբնակչութեան ֆիզիքական դաստիարակութեան վարչութեան պետ մինչեւ թոշակի անցնելը: Պարոն Ասատրենաը իր շրջապատի, բարեկամութեան նկատմամբ ուշադիր անձնաւորութիւն է, ակտիւ հասարակական գործիչ: Նա լաւ նպատակների համար շատերին է օգնել եւ շատերը համամիտ կը լինեն ինձ հետ: Նա աշխատասէր, ազնիւ, զսպուած, սկզբունքային անձնաւորութիւն է:

Յոբելեարին շնորհաւորում ենք 90 ամեակի առթիւ եւ նրան ցանկանում քաջառողջութիւն:




# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ, ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԵԿԵԼ, Ո՞ՒՐ ԵՆ ԳՆՈՒՄ.

## ՀԱՄՇԵՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածնախորդթիւէն*

*Թւում է՝ քրիստոնեայ անցեալից ոչ մի բան չի մնացել ներկայում:*

«Սեւ ծովն առաջ է շարժւում
Առաջ է շարժւում եւ կողք գնում
Համշենի հարսները
Իսլամին զոհ են գնում» *(21)*

*Նման բովանդակութեամբ մի քանի հեքիաթներ, ժողովրդական խաղիկներ, եկեղեցու եւ վանքի աւերակներ... Նշում է, թէ Համշենում գտնուած վանքերի եւ եկեղեցիների հայատառ համշեներէն տեքստերը գտնւում են Երուսաղէմի հայոց պատրիարքարանում (22): Այն դէպքում, երբ Ռիզէի համշենցիները դեռ շարունակում են եայլաներում խրախճանքներով նշել Վարդավառը՝ որպէս հին քրիստոնէական սովորոյթ, Խոպայի համշենցիների մէջ քրիստոնէութեան դարաշրջանին պատկանող գրեթէ ոչ մի հետք չի մնացել: Թէեւ ներկայիս Խոպայի որոշ համշենական գիւղերում առկայ են «Քիլիսէ» (Թուրքերէնով՝ եկեղեցի-Ակունքի խմբ.) բառով տեղանուններ, սակայն մեծ է հաւանականութիւնը, որ դրանք համշենցիներից առաջ են դրուել: Հետեւաբար կարելի է ենթադրել, որ Խոպայի համշենցիներն այս շրջան են եկել իսլամացման գործընթացից յետոյ:*

*Այսօր Խոպայում եւ Քեմալփաշայում կան բազում համշենական գիւղեր. Բաշոբա/Ղիզոբա, Յոլդերէ/Ժիւրփիջի, Ջաւուշլու/Ջաւուշլին, Քուինջուլար/Ջալոնա, Էշմաքայա/Արդալա, Գիւնեշլի/Ծաղիցա, Բալըքլը/Ջենդիթ, Հենդեք/Գարճ, Փընարլը/Անչուրող, Քայա Քեօիւ/Ղալվաշի, Ջամուրլու/Ջանչաղան, Շանա, Ուչքարդեշ, Քիւփլիւջիւ, Օսմանիյէ, Քարաօսմանիյէ/Ղեցելան, Աքդերէ/Ջիւլիւքեթ, Քազիմիէ/Վէյի Սարփ: Թէեւ համշենական բոլոր գիւղերում միմեանց ազգակից ընտանիքներ/տոհմեր են ապրում, ենթադրւում է, թէ Բաշոբա, Արդալա եւ Հենդեք գիւղերն իրար հետ ազգակցական կապ չունեցող ընտանիքներից է բաղկացած, հետեւաբար՝ յիշեալ գիւղերի բնակեցման գործընթացները եւս տարբեր ժամանակներում են եղել: Միայն Ուչքարդէշում եւ Քիւփրիւջիւում են համշենցիները լազերի եւ ռիզեցիների հետ միասին բնակւում: Ազգակցական յարաբերութիւնների շուրջ մեր կողմից կատարուած ուսումնասիրութեան շնորհիւ պարզ է դառնում, որ Քեմալփաշայում ապրող համշենցիները Խոպայից են այդ կողմեր գնացել: Այսինքն՝ համշենցիները նախապէս Խոպայի գիւղերում բնակութիւն հաստատելուց որոշ ժամանակ անց են սկսել Քեմալփաշայում ապրել: Հասկացւում է, որ այդ բնակեցումը մեկնարկել է գիւղատնտեսութեան եւ անասնապահութեան տեսանկիւնից աւելի ձեռնտու եղող Քեմալփաշայի հողատարածքներում գիւղատնտեսութեամբ կամ էլ հողի վարձակալութեամբ զբաղուող համշենցիների՝ հետագայում այդ տարածքները տէրերից գնելու միջոցով: Քեմալփաշայի գիւղերում ապրող տոհմերի մի մասը Խոպայում է, եւ այդ հատուածի ներկայացուցիչներն ասում են, թէ իրենց «մայր օճախը» Խոպայի գիւղերն են:*



«Մոդեռն» փոխակերպում՝ ուծացում

*Սոցիալտնտեսական զարգացումներն ազդել են նաեւ համշենցիների մշակութային եւ քաղաքական կեանքի վրայ: Խոպայի համշենցիները համշեներէնով հաղորդակցուող միակ համշենական խումբն են: Այն փաստը, որ այստեղի համշենցիները կարողացել են պահպանել իրենց լեզուն, պայմանաւորուած է ընդհանուր առմամբ փակ գիւղական կեանքով: Գիւղատնտեսութեամբ եւ անասնապահութեամբ գոյատեւող ներփակ գիւղական կեանքը հնարաւորութիւն է ընձեռել, որպէսզի լեզուն փոխանցուի սերնդէ սերունդ, եւ պահպանուեն որոշ աւանդոյթներ: Այդ վիճակն սկսել է փոխուել հանրապետութեան ժամանակաշրջանում: Հանրապետութեան հռչակման հետ մէկտեղ կենտրոնացուած կրթական համակարգի հիմնումը եւ զարգացումը պարտադիր են դարձրել Թուրքերէնի ուսուցումը: Միւս կողմից՝ տնտեսապէս այլեւս ուրբանիզացիային եւ առեւտրին փարուողները առեւտրի «լեզուն» սովորելու, յարգի մասնագիտութիւններով աշխատելու համար ստիպուած են եղել իրենց մայրենի լեզուի պէս իմանալ պետութեան պաշտօնական լեզուն. առնուազն կարող ենք եզրակացնել, որ դա, որպէս «բնական» գործօն, ազդեցութիւն է եւ ազդել է ձուլման գործընթացի վրայ:*

*Միջին եւ բարձր տարիքային խմբերին պատկանող անձանց հետ մեր ունեցած խօսակցութիւնների ժամանակ բազմաթիւ համշենցիներ յայտնել են, թէ իրենք դպրոցում են Թուրքերէն սովորել: Պարզուել է, որ այդ վիճակը շարունակուել է մինչեւ 1980-ականները: Բացի այդ՝ քանի որ դպրոցներում Թուրքերէնից բացի այլ լեզուի կիրառումն արգելուած է եղել, դպրոցների ղեկավարներն ընտանիքներին հարկադրել են երեխաների հետ տան ներսում եւս Թուրքերէն խօսել: Իրենց զաւակներին լաւ կրթութիւն եւ յարգի մասնագիտութիւններ ապահովել ցանկացող ընտանիքներն էլ սկսել են տան մէջ նոյնպէս Թուրքերէն խօսել: Չնայեած դրան՝ համշեներէնը եւս շարունակել է կիրառուել, բայց Թուրքերէնով հաղորդակցուելու համար գործադրուող ճնշումների պատճառով համշեներէնը Թուլացել եւ աղքատացել է: Այն դէպքում, երբ նախկինում բոլորը համշեներէն էին խօսում եւ հասկանում էին այդ լեզուն, ներկայում նոր սերնդին պատկանող բազում երեխաներ շատ քիչ են համշեներէն հասկանում եւ չեն կարողանում խօսել:*

*Չնայեած նախկինում Խոպայի կենտրոնում գրեթէ ոչ մի համշենցի չկար, 1970-ականներից սկսած, գիւղատնտեսութեան եւ անասնապահութեան հետընթացին զուգահեռ աճող առեւտրական գործունէութեան պայմանաւորուած՝ այսօր այլեւս բնակչութեան գրեթէ կէսը կազմում են համշենցիները: Հասկանալի է դառնում նաեւ, որ համշեցիների՝ Խոպա գաւառի կենտրոն «իջնելը» եւս բոլորովին դիւրին չի եղել: Խոպայի լազերի եւ համշենցիների միջեւ նոյնիսկ այսօր նրանց յիշողութիւններում պահպանուող եւ առօրեայ զարգացումներում որպէս «լազ-համշենցի խտրականութիւն/ընդհարում» յայտնի անհամերաշխութիւններ են գրանցուել: Այնպիսի «յուշեր», ինչպէս, օրինակ, այն, որ գաւառի կենտրոնում ապրող լազ աղաները համշենցիներին Թոյլ չեն տուել Խոպա մտնել, ծախելու նպատակով շուկայ բերած նրանց ապրանքներն առգրաւուել են այդ աղաների մարդկանց կողմից, բռնութիւն են կիրառել նրանց նկատմամբ, պահպանւում են համշենցիների հաւաքական յիշողութեան մէջ (23):*

*Նախկինում այգեգործութեամբ, անասնապահութեամբ եւ անտառային բարիքներով ապրող համշենցիները ժամանակի ընթացքում սկսել են զբաղուել առեւտրով, նաեւ արհեստագործութեամբ եւ բեռնափոխադրումներով: Ընտանիքների՝ մեծանալուն զուգընթաց մասնատուելը, երկար տարիներ հօտերի ձմեռելու գործառոյթն իրականացրած Պաթումի եւ շրջակայ բնակավայրերի համշենցիների՝ 1940-ականներին աքսորուելը եւ սահմանային անցակէտի խստիւ փակումը, Արտահանի, Սպերի եւ Օլթուի նման վայրերի եայլաներում պահպանուած անասնապահութեան պայմանների բարդացումը հանգեցրին նրան, որ համշենցիները նոյնպէս իրենց երեսը կամաց-կամաց շրջեն դէպի քաղաքներ ու առեւտուր: Տարիներ շարունակ Խոպայի կենտրոնում հացի փուռ ունեցող եւ փիդէի (հացի տեսակ-Ակունքի խմբ.) գործ անող Հըզըր Ցազըջըն հետեւեալն է պատմում համշենցիների՝ արհեստագործութեան եւ առեւտրի բնագաւառներում գրանցած զարգացումների մասին. ,1935 Թ. սկսել եմ հացի փուռ աշխատեցնել: 6 հատ փուռ կար այն ժամանակ: Արհեստով միայն 5 համշենցիներ էին զբաղւում Խոպայում: Փուռ տէրեր էին նաեւ Քուինջուներից Մուհամմեդը, Ցաղջըներից՝ երկու եղբայր, ինչպէս նաեւ՝ Շիւքրիւ Աքբըյըքի պապը: Կար նաեւ Ջենդիթից՝ Թոփալ Ջեմալի հայր Հարունը, մէկ էլ՝ Մեհմեթ Թոփալօղլուն: Վեցերորդը ես եղայ: Մնացած բոլոր փռատէրերը լազեր էին: Քիբարօղլուն, Թոսունօղլուն, Մուսթօղլուն, Վաջօղլուն... սրանք բոլորն էլ հօտեր ունէին: Այդպէս էր մինչեւ 1940-ական Թուականները» (24):*

*Քանի որ Խոպան մինչեւ 1972 Թ. բացուած նաւահանգստի գործարկումից առաջ առեւտրի տեսանկիւնից առանձնապէս ակտիւ վայր չի եղել, միւս խոպացիների նման համշենցիները եւս բանուորութիւն են արել շրջակայ այնպիսի նահանգներում եւ գաւառներում, ինչպիսիք են Արդահանը, Մուրգուլը, Պաթումը, անգամ՝ Զոնգուլդաքը, որտեղ իրենց սովորած արհեստներով հետագայում շարունակել են զբաղուել Խոպայում եւ այլուր: 1970-ական Թուականներին շրջանում պետութեան խրախուսմամբ տարածուել է Թէյի մշակումը, որի զարգացմանը զուգահեռ դադարել են եգիպտացորէն մշակել եւ այգեգործութեամբ զբաղուել: Սկզբնական շրջանում Թէյագործութեան խրախուսումը հանգեցրել է նրան, որ գիւղատնտեսութեան համար ձեռնտու բոլոր հողատարածքները յատկացուել են Թէյի մշակմանը: Թէյի մշակումը միեւնոյն ժամանակ այլընտրանք է դարձել նաեւ անասնապահութեանը: Խոպայի նաւահանգստի բացման եւ Թէյի մշակման հետ մէկտեղ սկսում է արագ զարգանալ նաեւ բեռնափոխադրումների ոլորտը: Այս գործընթացում բազմաթիւ համշենցիներ մտել են այդ ոլորտ: Այսօր վարորդական գործը եւ հացթուխութիւնը գրեթէ նոյնացւում են համշենցի լինելու հետ: Սկզբնապէս որպէս առանձին վարորդներ աշխատածներն սկսել են ընկերութիւններ հիմնել: Քուինջու, Ցալչըն, Դալքըլըչ, Ցենիգիւլ ազգանուններով համշենցիներին պատկանող փոխադրումներ իրականացնող ընկերութիւնները ազդեցիկ տեղ են զբաղեցնում այս բնագաւառում: Յատկապէս 1990-ականներին նախկին խորհրդային երկրների հետ առեւտուր սկսելուն զուգահեռ, իրենց եկամուտներն արագ աւելացրած՝ փոխադրումներով զբաղուող ընկերութիւններն սկսել են աստիճանաբար արդիւնաբերողներ դառնալ: Այսօր համշենցի ձեռնակատէրերն իրենց կապիտալն այլեւս պահպանում են բոլոր առեւտրական ոլորտներում (25):*

*Տնտեսական բնագաւառում աճող ազդեցութեամբ պայմանաւորուած՝ համշենցիներն սկսել են հանդէս գալ նաեւ քաղաքական ու սոցիալական կեանքում: 2004 Թ. առաջին անգամ Խոպայի քաղաքապետ է ընտրուել համշենցի (խօսքը Ցըլմազ Թոփալօղլուի մասին-Ակունքի խմբ.): Վարորդների միութեան նախագահ Իսրաֆիլ Քոթիլը, Խոպայի առեւտրի եւ արդիւնաբերութեան պալատի նախագահ Էնգին Քուինջուն նոյնպէս համշենցի են: Բիւրոկրատական ապարատում, կրթութեան եւ առողջապահութեան ոլորտներում բազմա-*

Շար.ը էջ 19

# ՈՒԺԵՂ ԳԼԽԱՑԱՒԵՐՈՒ ԵՒ ԸՆԿՃՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԿԱՊ ՄԸ

*Վերջերս գիտնականներ կը ջանան յայտնաբերել այն գործօնները, որոնք կրնան նպաստել հոգեբանական անհանգստութիւններու յառաջացման: Այս գործօնները կրնան ըլլալ կենսաբանական, առողջապահական, միջավայրի հետ կապուած, եւայլն: Հոգեբանութեան ծիրին մէջ ամէնէն շատ ճանչցուած եւ ամէնէն հաւանական անհանգստութիւններէն է ընկճուածութիւնը (Depression) եւ զանազան գործօններ կրնան նպաստել այս անհանգստութեան:*

*Գանատացի հետազօտողներ շնորհիւ իրենց նոր հետազօտութեան յայտնաբերած են գործօն մը, որ այլ գործօններու հետ գոյանալու պարագային կրնայ պատճառ դառնալ ընկճուածութեան: Թորոնթոյի համալսարանի հետազօտողները վերլուծելով 67 հազար գանատացիներու ֆիզիքական եւ հոգեկան առողջութիւնը յայտնաբերած են կապ մը՝ Migraine-ի եւ ընկճուածութեան միջեւ: Մասնակիցներէն 6 հազարը ախտաճանաչուած են Migraine-ով:*

*Նախապէս կատարուած ուսումնասիրութիւններու համաձայն Migraine-ը աւելի սովորական է կիներու քան տղամարդոց մէջ: Կիներու պարագային Migraine-է տառապելու հաւանականութիւնը մօտաւորապէս 14 առ հարիւր է, իսկ տղամարդոց այս համեմատութիւնը կը նուազի համնելով 6 առ հարիւրի:*

*Ուսումնասիրութեան արդիւնքները ցոյց տուած են, թէ Migraine-է տառապող մարդոց մօտ ընկճուածութեան վտանգը կրկնապատիկ է: Ըստ հետազօտութեան հեղինակներուն, Migraine-է տառապող 30 տարեկանէն փոքր մասնակիցներու մօտ ընկճուածութեան հաւանականութիւնը վեց անգամ աւելի բարձր է քան 65 տարեկանէն մեծ մասնակիցներու պարագային: Այս ուսումնասիրութեան արդիւնքները հրատարակուած են Depression Research and Treatment ամսաթերթին մէջ:*

# ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԿՐՆԱՅ ԿԱԽԵԱԼ ԸԼԼԱԼ ԱՐԵԱՆ ՇԱՔԱՐԻ ՔԱՆԱԿԷՆ

*Ամերիկացի եւ Անգլիացի գիտնականներ միասնաբար համագործակցելով կատարած են փորձարկում մը քննելու համար յիշողութեան մակարդակը ըստ արեան մէջ շաքարի քանակին:*

*141 անձերու մասնակցութեամբ կատարուած փորձարկումը ցոյց կու տայ կապ մը՝ արեան շաքարի քանակին եւ յիշողութեան մակարդակի միջեւ:*

*Ըստ փորձագէտներուն, արեան մէջ շաքարի բարձր քանակը կրնայ առընչուած ըլլալ յիշողութեան հետ կապուած հարցերու հետ: Փորձարկումի արդիւնքներուն համաձայն՝ շաքարի ցած քանակը կրնայ նպաստել յիշողութեան բարելաւման նոյնիսկ տարիքով մեծ մարդոց պարագային:*

*Գիտնականներ քննելով մասնակիցներու ուղեղի յիշողութեան պատասխանատու մասը, որ կը կոչուի hippocampus, կը շեշտեն որ արեան մէջ շաքարի ցած քանակ ունեցող մարդոց մօտ hippocampus-ը աւելի մեծ է: Այս փորձարկումին մասին անդրադարձած է Neurology ամսաթերթը, որ նաեւ նշած է թէ արեան շաքարի քանակը իր բնական սահմաններուն մէջ ըլլալով հանդերձ կրնայ վնասել յիշողութեան՝ երբ քանակը բարձր ըլլայ:*

*Փորձարկումի ընթացքին մասնակիցները ենթարկուած էին բազմաթիւ բառերու, որոնք ցուցադրուած էին մեծ պաստառի միջոցով: Երեսուն վայրկեան դադարէ ետք մասնակիցները պէտք էր յիշէին այդ բառերը: Արեան շաքարի քանակին համապատասխան՝ բարձր քանակութեամբ շաքար ունեցող մարդիկ նուազ թիւով բառեր յիշած են:*

*Բազմաթիւ ուսումնասիրութիւններ կը շարունակեն ցոյց տալ ֆիզիքական առողջութեան եւ հոգեկան հանգստութեան միջեւ կապը: Որքան առողջ ըլլայ մարմինը այնքան կրնայ առողջ ըլլալ նաեւ միտքը: Ճիշդ է նաեւ հակառակը՝ «Առողջ միտք առողջ մարմնի մէջ»:*

# ՀՈԳԵԲԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

*Նախանձը թաքնուած զգացողութիւն է: Այն իրավիճակը, երբ դուք նախանձի զգացողութիւն կ'ունենաք, սովորաբար կապուած է դիմացինին եւ ձեր միջեւ մրցակցութեան ու համեմատութեան զգացողութիւններու յառաջացումով: Մրցակցութիւնը եւ համեմատութիւնը ուրիշներու հետ կը ծառայեն իբրեւ միջոց դուք ձեր «ես»-ին գնահատական տալու համար:*

*Որպէսզի չափաւորէք կամ վերացնէք նախանձի զգացողութիւնը՝ պէտք է գիտնաք անոր յառաջացման աղբիւրները:*

*Հետաքրքրական է, որ նախանձը կը ստիպէ ժրաջան աշխատիլ, որպէսզի դուք ձեզ արժանի համարէք՝ անընդհատ համեմատուելով դիմացինին հետ:*

*Ինչո՞ւ կը յառաջանայ նախանձի զգացողութիւնը՝*

*Առաջինը այն միտքն է, որ դուք կ'ուզէք այն, ինչ ունի ուրիշ մը, ինչպէս՝ դիրք, իշխանութիւն, դրամ, իր կամ այլ բան: Այս զգացողութիւնը ձեր մէջ կը ծնի չարութիւն դէպի այն մարդը, որուն կը նախանձիք, իսկ ձեր մէջ անիկա կը վերածուի տառապանքի:*

*Ուրիշներու յաջողութեան կամ ունեցուածքի հանդէպ նախանձը տհաճ զգացողութիւն է: Փոխանակ մենք մեր մէջ փնտռենք յաջողութիւնը, որպէսզի զգանք ուրախութիւն, նախանձի պարագային կ'ուզենք ունենալ այն, ինչ ունի ուրիշը կամ ուզենք, որ ուրիշը կորսնցնէ իր ունեցածը, որպէսզի մենք մեզի համար վերականգնենք մեր պատկերացուցած արդարութեան եւ հաւասարութեան զգացողութիւնը:*

*Նախանձը ունի բազմաթիւ դրսեւորումներ, որոնցմէ շատերը կը պարունակեն թաքնուած վտանգներ: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ կրնանք մէկուն հանդէպ ձգողականութիւն զգալ, բայց իրականութեան մէջ այդ ձգողականութեան տակ թաքնուած ըլլայ նախանձի զգացողութիւնը:*

*Նախանձը հոգեկան հիւանդութիւն է:*

*Ֆրանսայի Առողջապահութեան եւ բժշկական հետազօտութիւններու Ազգային ուսումնարանի գիտնականները փորձած են ստուգել նախանձող մարդոց ուղեղի աշխատանքը:*

*Գիտնականները հետազօտութիւնը անուանած են «որո՞ւն շաքարը համեղ է», եւ յատուկ սարքի միջոցով նկարած կամաւորներու ուղեղի աշխատանքը՝ երկու փոքր հոլովակներու ժամանակ: Առաջին հոլովակին մէջ շաքարը պարզապէս դրուած էր սեղանին, իսկ երկրորդին մէջ՝ ձեռք մը գունագեղ քաղցրեղէնին մէջէն շաքար կ'ընտրէր: Այնուհետեւ, մասնակիցները պէտք է պատասխանէին, թէ որ շաքարը պիտի ուզէին ունենալ՝ սեղանին դրուա՞ծը, թէ անծանօթին կողմէ ընտրուածը:*

*Գրեթէ 60 տոկոսը պատասխանած են երկրորդը: Իսկ երբ բժիշկները վերլուծած են թոմոկրաֆիք արդիւնքները, նկատած են նախանձներու մօտ ուղեղի աշխատանքի խանգարում:*

*«Ասոր մէջ անոնք մեղաւոր չեն: Անոնք պարզապէս հոգեկան խանգարում ունին: Միայն թէ կ'անհանգստացնէ «հիւանդ մեղաւորներ»-ու շատ բարձր տոկոսը»,- անոնց վարմունքը արդարացուցած է բժիշկ Տիպոլը:*

# ՉՈՐՍ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ ՈՐՈՆՔ ԿԸ ԲԱՐԵԼԱՒԵՆ ՈՒՂԵՂԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

*Ձկան իւղ: Սալմոնը, սարտինը, թոնը, ինչպէս նաեւ ընկոյզը, դդումը եւ լուբիան կը պարունակեն մեծ քանակութեամբ ձկան իւղ կամ օմեկա 3, որ շատ օգտակար է ուղեղին համար:*

*Starch-ի կողքին, օմեկա 3-ը ուղեղին կը պարգեւէ ուժանիւթ:*

*Օմեկա 3-ին առաւելութիւնը այն է, որ դիւրութեամբ կը փոխադրուի մարմինէն դէպի ուղեղ:*

*Կարմիր հատապտուղ: Խաղողը, մորմենին եւ այլ հատապտուղներ որոնք ունին մուգ կարմիր կամ մանիշակագոյն գոյնը կրնան վաբելաւել կարճ ժամանակամիջոցի (short term) յիշողութիւնը, այսինքն նոր եւ թարմ տեղեկութիւններ յիշելու կարողութիւնը: Այս հատապտուղները նաեւ կրնան դանդաղեցնել կարճ ժամանակամիջոցի յիշողութեան հետ կապուած առողջապահական հարցերու զարգացումը:*

*Լոլիկ: Բազմաթիւ ուսումնասիրութիւններու հիման վրայ գիտնականներ կը պնդեն, թէ՝ լոլիկին մէջ գտնուող լայգոբին նիւթը, որ նաեւ պատասխանատու է լոլիկի կարմիր գոյնին, կրնայ ուղեղի բջիջները թարմ եւ առողջ պահել: Հետեւաբար, լոլիկը կրնայ ուղեղը պաշտպանել Alzheimer's-է:*

*Դդումի կուտ: Դդումի ճերմակ կուտերը կարելի է փոքր քանակով օրական դրութեամբ սպառել: Այս կուտերը կը բարձրացնեն արեան մէջ զինկի քանակը, որ իր կարգին կը բարելաւէ յիշողութեան եւ մտածելու կարողութեան մակարդակը:*

# MEDICARE ՍՏԱՑՈՂՆԵՐՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

***ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԱՃԵԱՆ***

*Medicare կամ HMO առողջապահական ապահովագրութիւնը փոխելու կամ նոր ստանալու շրջաններէն մէկն է: Անոնք որ նոր պիտի սկսին, այլ խօսքով 65 տարեկան եղած կամ ըլլալը շատ մօտ է, շատ խոհեմ ըլլալու են նախքան նախընտրութիւն ընելը:*

*Բուն պետական medicareէն զատ գրեթէ միւս բոլորը շահաբեր ընկերութիւններ են: Անոնք HMO ներ են, եւ կը գործեն զանազան անուններու տակ: Ամենահետաքրքրականը իրենց անունին advantage բառը կը կցեն, ըսելու համար որ իրենք medicareէն աւելի առաւելութիւններ կը տրամադրեն: Անոնց միակ առաւելութիւնը այն որ յաւելեալ առողջապահական ապահովագրութեան պէտք չկայ, քանի որ բոլոր ծախսերը իրենք կը հոգան, մինչ medicareը կը վճարէ միայն ութսուն առ հարիւրը: Medicareի գլխաւոր առաւելութիւնը այն է, որ հիւանդը ազատ է իր ուզած բժիշկին (կամ այլ դարմանատունի) դիմել եւ գրեթէ սահմանափակում չկայ թէ տարին քանի՞ անգամ կարելի է բժիշկի մը այցելել:*

*HMO-ները մէկէ աւելի սահմանափակումներ ունին, որոնց գլխաւորը այն է, որ պէտք է դիմել միայն իրենց ունեցած ցանկի բժիշկներուն: Անոնք այս շրջանին գիրար կը հրմշտկեն մամուլով, հեռատեսիլով եւ այլ միջոցներով, յաճախորդներ որսալու համար: Անոնք որոնք medicareի կողքին medical ունին, բնաւ պէտք չէ մտածել HMO ներու (անշուշտ մեր կարծիքով): Եթէ անպայման HMOի մը կ'ուզէք արձանագրուիլ, դարձեալ մեր կարծիքով ամենանախընտրելին Kaiser-ն է:*




HayastanInfo.net

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ 1650 ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

*Շարունակուած էջ 6–էն*

*Սոյն գիտաժողովը համակարգչային արդի մեթոտներով մասնակիօրէն արբանեակային հեռասփռում ունենալով, մատչելի դարձաւ աշխարհի չորս ծագերուն:*

*Առաջին նստաշրջանի զեկուցաբերներն էին՝ Հայր Լեւոն Զէքիեան, նիւթ ունենալով «Մեսրոպ Մաշտոց անուան խորհուրդը տասնվեց դարերու հայեցակէտէն»: Դժբախտաբար հիւանդութեան պատճառով ակամայ բացակայելուն պատճառով իր ելոյթը կարդաց Յարութ Տէր Դաւիթեան: Ապա նիւթի քննարկումը տեղի ունեցաւ Հայր Լ. Զէքիեանի հետ ուղղակի եթերով՝ Վենետիկէն:*

*Երկրորդ զեկուցաբերն էր Դոկտ. Աբրահամ Տէրեան «Կորիւնի «Վարք Մաշտոցի» կառուցուածքն ու նպատակը»:*

*Դոկտ. Սրբուհի Հայրապետեան «Ազգային Ինքնութեան արմատաւորումը եւ հիմնաւորումը»:*

*Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեան՝ «Հոգեւոր պետականութեան կերտման եւ ազգային ինքնութեան պահպանման ծրագիրը» Ե. դարուն եւ այսօր»:*

*Ճաշի դադարէն ետք տեղի ունեցաւ երկրորդ նստաշրջանը: Զեկոյցներով հանդէս եկան հետեւեալները.*

*Դոկտ. Երուանդ Ջօրեան »Հայկական Համացանց համալսարանի առաքելութիւնը եւ հայկական ինքնութեան ամրակայումը«:*

*Դոկտ. Յակոբ Կիւլլիւճեան՝ «Լեզուի հեռանկարները պատկանելիութեան եւ ինքնութեան յարաբերականացման ու համաշխարհայնացման դիմաց՝ Ե. դարուն եւ այսօր»:*

*Դոկտ. Ռապըրթ Հիւսըն՝ «Մեսրոպ Մաշտոց եւ Մխիթար Սեբաստացի, Հայ ժողովուրդի երկրորդ եւ երրորդ լուսաւորիչները»:*

*Զեկոյցներու աւարտին ներկաները իրենց շահեկան հարցումներով յաւելեալ լուսաբանութիւններ ստացան արծարծուած նիւթերուն շուրջ:*

*Գիտաժողովի ընթացքին զեկուցաբերներու կենսագրութիւնները ներկաներուն ծանօթացնողներն էին Տիկ. Ծովինար Մելգոնեան (Համազգային) եւ Յարութ Տէր Դաւիթեան (Նոր Սերունդ):*

*Կը շնորհաւորենք հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի նուիրուած սոյն գիտական բարձրորակ սեմինարի բոլոր մասնակիցներն ու կազմակերպիչները, մաղթելով նորանոր յաջողութիւններ իրենց հետագայ ծրագիրներուն:*

*Գ. Մ.*

## ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ



*Շարունակուած էջ 13–էն*

*Տագէսեան, Տիկ. Ազատուհի Սիմոնեան-Գալայճեան, Տիկ. Մաքրուհի Թաթուլեան- Խաչատուրեան: Իւրաքանչիւրը փոխանցեց Հաճնոյ հերոսամարտին եւ հաճընցիներու գոյատեւման կամքին մասին:*

*Այս առիթին համար յատուկ պատրաստուած բեմին վրայ, գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը մասնակցութեամբ լիբանանահայ երգիչներ Մանուկ Մինասեանի եւ Պերճ Նագգաշեանի:*

*Ներկաներու խանդավառութիւնը եւ եռուզեռը կանգ չէին առներ: Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը անգամ մը եւս կը յաւերժացնէր հերոսամարտի նահատակներուն յիշատակը:*

*Յաջորդ օրը՝ Կիրակի, 27 Հոկտեմբեր առաւօտեան հաւատացեալ ժողովուրդը հաւաքուած էր Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցին, ուր Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն յիշատակին պատարագեց եւ քարոզեց Հոգշ. Տէր Վարանդ Վրդ. Գորդմոսեան, մասնակցութեամբ Գայիանէ երգչախումբին:*

*Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք իրենց ներկայութեամբ կամ գործակցութեամբ մասնակից դարձան Հաճնոյ հերոսամարտի աւանդական մատաղի պատրաստութեան եւ կազմակերպչական յարակից աշխատանքներուն:*

## «ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ»

*Շարունակուած էջ 14–էն*

*ղիկոսի եւ Սովետական Նորահաստատ Հայաստանի դժուարին տարիներու մանրամասն նկարագրութիւններով, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի Ատանայի մէջ Կիլիկիոյ տուած վերջին հրաժեշտով՝ Կիլիկիոյ պարպումին՝ 1921 թուականին: Հոն կը գտնուի նաեւ Երուսաղէմի երախտաշատ միաբան եւ ապա Պատրիարք Մեսրոպ Նշանեան վարդապետի մնայուն եւ իմաստուն աշխատանքը Երուսաղէմի Պատրիարքութեան ամենավտանգաւոր այդ տարիներու ընթացքին, երբ Օսմանեան Թուրքիա ամէն կերպ կը նսեմացնէր հայոց ներկայութիւնը Սուրբ Երկրէն ներս անհարկի եւ քաղաքական դիտումներով»:*

*Եփրեմ Սրբազան գիրքին երկու բաժիններուն ակնարկելով յայտնեց, թէ՝ երեք հատորները միասնաբար կը նշեն Հայ Բարձրաստիճան 40 Հոգեւորականներու բացառիկ վաստակը՝ վարչական, մատենագրական, ձեռագրագիտական, եւ գրական մարզերէ ներս, որոնք կը տողանցեն բոլորանուէր ծառայութեամբ ի սպաս դնելով իրենց կեանքը՝ 20-րդ դարու ընթացքին, յատկապէս առաջին յիսնամեակին՝ փրկելով Հայ Եկեղեցին իսկական վտանգէ՝ թէ՛ ցեղասպանութեան եւ թէ՛ Սովետական անկրօն տիրակալութեան ճիրաններէն:*

*Եփրեմ Սրբազան կարեւորութեամբ նշեց նաեւ՝ որ այս հատորը եւս իր երկրորդ բաժնին մէջ կը բովանդակէ բանասիրական, աստուածաբանական եւ ձեռագրագիտական ակնառու ներդրում, ինչպէս «Հայաստանի հնագոյն Աշխարհագրութեան» բնագիրը, աստուածաբանական ամենէն վաւերական երկը՝ «Կնիք Հաւատոյ», ինչպէս նաեւ աշխարհաբարի նորագոյն թարգմանութիւնը լրիւ «Շարակնոց»ին՝ տքնաջան աշխատանքով՝ կատարուած իր՝ Եփրեմ Արքեպիսկոպոսին կողմէ:*

*Տաղանդաւոր երգչուհի Մաննիկ Մանուկեանի մենակատարմամբ գեղարուեստական գողտրիկ յայտագրէն ետք, հրաւիրուեցաւ իր խօսքը աւելցնելու գիրքին հեղինակը Արժ. Տէր Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան: Շնորհակալութեան իր խօսքը ուղղելէ ետք Եփրեմ Արքեպիսկոպոսին, յանուն Առաջնորդ Սրբազան Հօր ներկայ եղող Տաճատ Ծ. Վարդապետին, Տ. Յովսէփ Աւ. Քհնյ. Յակոբեանին, եւ մեներգչուհի Մաննիկ Մանուկեանին, մասնաւորեց անցեալ դարու առաջին յիսնամեակի փոթորկալից տարիները, որոնց դէմ տոկաց Հայ Եկեղեցին շնորհիւ հոյլ մը Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի եւ Կ. Պոլսոյ Արմաշու Դպրեվանքի առաջին շրջանաւարտներու նուիրեալ եւ քաջարի հոգեւորականներուն, երբ անոնցմէ ոմանք նահատակուեցան նոյնիսկ, եւ ոմանք աքսորուեցան, եւ սակայն հրաշքով վերապրող հոյլ մը հոգեւորականներ, տակաւին երիտասարդ, Ս. Էջմիածինը փրկեցին ու Արմաշը «փոխադրեցին» Երուսաղէմ եւ Անթիլիաս:*

*Տէր Զաւէն ապա իր բանասիրական բաժնի 40-ի համող երկերէն երեքը առանձնացնելով անոնց հնագոյն եւ ամենէն վաւերական ըլլալը հաստատեց: Առաջինն է անոնցմէ 5-րդ դարու բացառիկ մատենագիր Եզնիկ Կողբացիի «Եղծ Աղանդոց»ը որ քրիստոնեայ Հայաստանի առաջին վաւերական ջատագովութիւնը կը հանդիսանայ՝ ընդդէմ նոյն դարու այլազան աղանդներուն, լիովին լուսաբանուած բազմաթիւ Ս. Գիրքի մէջբերումներով: Եզնիկ Բագրեւանդի Եպիսկոպոսն էր եւ մին Սուրբ Թարգմանիչներէն որ իր ուսուցչապետին Ս. Մեսրոպ Մաշտոցի Ս. Սահակ Պարթեւ Հայրապետի կողքին եւ իր ընկերակիցներուն հետ միասին թարգմանեցին Աստուածաշունչ Մատեանը: Ինքն էր որ Կ. Պոլիս ուսանելու գնաց եւ իր հետ Վաղարշապատ բերաւ Յունարէն լաւագոյն «Եօթանասնից» կոչուած բնագիրը, որմէ կատարուեցաւ Աստուածաշունչի վերջնական ոսկեղնիկ գրաբարի թարգմանութիւնը:*

*Յաջորդ աղբիւրը որ Տէր Զաւէն ճշդեց 7-րդ դարու «Կնիք Հաւատոյ» աստուածաբանական եւ քրիստոսաբանական երկն էր խմբագրուած 618 թուին Կոմիտաս Ա. Աղցեցի Կաթողիկոսին կողմէ, տալով վերապրող միակ ձեռագրին ողխսականը, զոր գտած էր Կարապետ Եպս. Տէր Մկրտչեան 1914 թուականին Պարսկաստանի Դարաշամբ գիւղաւանի Ս. Ստեփաննոս Նախավկայ վանքին մէջ: Ան յիշատակեց երրորդ կարեւորագոյն աղբիւր մը եւս 8-րդ դարէն՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն զոր խմբագրած էր առաջին անգամն ըլլալով Իմաստասէր Յովհան Օձնեցի Կաթողիկոսը որպէս մնայուն կանոնները Հայ Եկեղեցւոյ՝ անոնց յարակից Եկեղեցական Ժողովներով: Հատորը իր վերջնական ձեւին բերուած էր գիտնական իրաւագէտ Վազգէն Յակոբեանի կողմէ երկու մեծադիր հատորներու մէջ՝ Երեւան հրատարակուած, մին 1964-ին եւ միւսը 1971-ին:*

*Տէր Զաւէն յայտնեց նաեւ որ իր յաջորդ երկը, անգլերէն լեզուով, արդէն պատրաստ է տպարան յանձնուելու, ուր քառասունի չափ ուսումնասիրութիւններ թարգմանաբար պիտի տրամադրուին անգլիախօս մեր հասարակութեան:*

*Իր փակման խօսքով Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան զգացուած բառերով գնահատեց գրքին հեղինակը որպէս ժառանգորդը անցեալի մեր վարդապետներուն, որոնք հարուստ աւանդ թողուցին Հայ Եկեղեցւոյ եւ եկեղեցական գրականութեան անդաստանէն ներս: Դրուատեց Տէր Հօր աննահանջ ոգին եւ աշխատասիրութիւնը իր վերջին շրջանի շարք մը կրօնագիտական եւ պատմագիտական երկերու հրատարակութեանց համար:*

*Հայր Տաճատ Ծ. Վարդապետի «Պահպանիչ»ով վերջ գտաւ շնորհանդէսը որուն յաջորդեց հիւրասիրութիւն:*

*«Մասիս»*

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ, ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԵԿԵԼ, Ո՞ՒՐ ԵՆ ԳՆՈՒՄ.
## ՀԱՄՇԵՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 16-էն*

*թիւ համշենցիներ են պետական պաշտօններ զբաղեցնում:*

*Թուրքիայի համար էական քաղաքական շրջադարձ հանդիսացող 1874-1980 թուականների եւ 1980 թ. տեղի ունեցած ռազմական յեղաշրջման ազդեցութիւնը սկսեցին թօթափել 1990-ականներից յետոյ: Այս շրջանում թէ՛ աջակողմեան եւ թէ՛ ձախակողմեան հոսանքներում «պարտիզանութիւն» արած համշենցիներ են եղել: Այսպէս՝ այն դէպքում, երբ գաւառի կենտրոնում ապրող լազերը խիստ մօտ են պետութեան հետ (քաղաքաբնակ լինելու շնորհիւ նրանք աւելի վաղ են ընդգրկուել արդիականացման գործընթացում), համշենցիները շատ ուշ են մտել սոյն գործընթացի մէջ: Համշենցիները 1980-ականներին անգամ հաւաքական աշխատանքով են իրենց գիւղերի ճանապարհները շինել: Բացի այդ՝ «մէկ լեզու (թուրքերէն), մէկ ազգ (թուրք)» ընկալմանը հակառակ՝ առանձնացող մայրենի լեզու ունեցող համշենցիները, բնականաբար, եղել են օտարացման սուբիեկտ: Հետեւաբար նրանց սոցիալական եւ քաղաքական պահանջներն առաւելապէս հակուել են դէպի ընդդիմադիր քաղաքականութեանը, 1970-ականներից սկսած՝ «Քարաօղլան» Բիւլենթ Էջեւիթի ժողովրդահանրապետականութեանը եւ, մասնաւորապէս, երիտասարդ շրջանակները՝ առաւելապէս յեղափոխական ձախակողմեան շարժումներին (26):*

*Միւս կողմից՝ համշենցիների մի էական հատուած էլ նախընտրում է, որպէս տնտեսական ոլորտում զարգանալու ուղի, մօտ լինել պետականամէտ կուսակցութիւնների հետ: Կարող ենք ասել, որ իրականում այդ «պետականամէտ ուղեգծի» ենթագիտակցութեան մէջ ընկած է մէկ այլ «մտահոգութիւն»՝ հայկականութիւնը: Համշենցիները գիտակցում են, որ իրենք համարւում են իսլամացած հայեր, եւ նրանցից ոմանք ցանկանում են մօտ կանգնել աջակողմեան կուսակցութիւններին:*

«Պոստմոդեռն փոխակերպում»՝ ինքնութեան բացայայտում

*Համշենցիների մէջ ինքնութեան թեման հիմնականում սկսել է արդիականութիւն ձեռք բերել 1990-ականների վերջերին մօտ: Դրանում դեր են ունեցել տարբեր ազդակներ, որոնց մէջ գլխաւոր տեղ է զբաղեցնում քրդերի՝ ինքնութեան հիմքով վարած քաղաքականութեան՝ ողջ երկրում առաջացրած ցնցումը: Քրդական շարժումների՝ մայրենի լեզուի եւ մշակոյթի թեմաներով պահանջների շնորհիւ հանրապետութեան ռեժիմի կողմից ուծացման ենթարկուած միւս էթնիկ ինքնութիւններում եւս զարթօնք է արձանագրուել ընդդէմ «պաշտօնական գաղափարախօսութեան»: Քրդերին հետեւել են համշենցիների հետ կողք կողքի ապրող լազերի՝ լեզուի եւ մշակոյթի ոլորտներում առկայ զարթօնքը եւ, յատկապէս, լազերէնով երաժշտական բնագաւառում արձանագրուած զարգացումները:*

*Հանրապետութեան պատմութեան ընթացքում ոչ թուրք էթնիկ ինքնութիւնների դէմ տարուած ուծացման աշխատանքները տեղիք են տուել այդ ներքին ինքնութիւններում զանազան հոգեբանութիւնների առաջացմանը: Զուլումը նրանց ուղեղներում կոդաւորել էր, թէ թուրքերէնը, պետութեան լեզուն լինելուց բացի, նաեւ ժամանակակից, քաղաքաբնակ լինելու ցուցանիշ է: Հետեւաբար ապահովուել է, որ տեղական լեզուները, մի տեսակ «օտարութեան» յետամնացութեան, գիւղացիութեան հետ նոյնացուելով, ընկալուեն որպէս ամօթալի վիճակ: Հասարակական ոլորտում թուրքերէնից բացի մէկ այլ լեզուի կիրառումը ամօթալի է դարձել: Քրդերի՝ մշակոյթի եւ լեզուի բնագաւառներում տարած պայքարը, այնուհետեւ՝ լազերի՝ նրանց հետեւած լինելու փաստը նախ եւ առաջ ապահովել են, որպէսզի յօդս ցնդի այդ հոգեբանութիւնը: Տարբեր էթնիկ ինքնութիւններ սկսել են աւելի բացայայտ խիզախութեամբ տէր կանգնել իրենց լեզուին եւ երգարուեստին (27):*

*Համշենցիների՝ անհետացման վտանգի տակ կանգնած իրենց լեզուին եւ մշակոյթին տէր կանգնել սկսելու հարցում մեծ ազդեցութիւն է թողել նաեւ լազ երաժիշտ Քեազըմ Քոյունջուի՝ սեփական ալբոմներում համշեներէն երգերին, խաղիկների տեղ տալու փաստը: Կարճ ժամանակահատուածում ողջ երկրով մէկ ժողովրդականութիւն շահած Քեազըմ Քոյունջուն մեծ նպաստ է ունեցել թէ լազերի եւ թէ համշենցիների մէջ վերոյիշեալ հոգեբանութիւնը փոխելու գործում: Քեազըմ Քոյունջուից յետոյ բագում համշենցի երիտասարդներ սկսել են յայտնագործել մինչ այդ իրենց մեծ մայրերի յիշողութեան մէջ գաղտնի պահուած մայրենի լեզուով երգերը, անգամ՝ նոր երգեր յօրինել համշեներէնով: Տեխնոլոգիաների ստեղծած հնարաւորութիւններից էլ օգտուելով՝ այդ երգերը, երգերի տեքստերի ժողովածուներն սկսել են հրապարակել սոցիալական կայքերում: Երաժշտութեան բնագաւառում Գեոքհան Բիրբենի, Բիգիմ Յաշարի (Քաբաօսմանօղլու), Այդողան Թոփալի, «Վոկա»-ի, Այդողան Յըլմազի, Սալիհ Յըլմազի, Մելուսեսի, (Ալթան Ջիւելէքի) պէս բազմաթիւ անձինք եւ խմբեր թողարկել են համշեներէն երգերից կազմուած ալբոմներ: Համշենցիների թեմայով ուսումնասիրութիւններ եւ ժողովածուներ են հրապարակուել սոցիալական կայքերում եւ բլոգներում: Խոպայում տպագրուող «Բիրեաշամ» ամսագրում առաջին անգամ տեղ են գտել երկու լեզուներով (համշեներէն եւ թուրքերէն) նիւթեր: 2012 թ. մարտին Ստամբուլում հիմնուել է ՀԱՏԻԿ (համշենական մշակոյթի ուսումնասիրման եւ պահպանման կազմակերպութիւն) միութիւնը (ՀԱՏԻԿ-ը հիմնուել է 2011 թ. Յունիսին-Ակունքի խմբ.):*

*Մշակութային ոլորտում արձանագրուած այս զարգացումները համշենցիների ինքնութեան խնդրի լուծման հարցում տարբեր միտումների տեղիք են տուել: Ինչպէ՞ս է ապահովուելու համշենական ինքնութեան ամենակարեւոր մասը հանդիսացող լեզուի պահպանումը: Այս առումով բաւարարուելու են միայն առկայ բառապաշարը պահպանելո՞վ, թէ՞ պէտք է կապ հաստատել համշեներէնի մայր աղբիւր հայերէնի հետ: Համշեներէնը պահպանելու համար պէ՞տք է արդեօք, քրդերի եւ այլ էթնիկ խմբերի նման, պահանջել, որ համշենցիների բնակավայրերում համշեներէնն ուսուցանուի առնուազն որպէս ընտրովի դաս: «Համշենական մշակոյթ ասելիս ի՞նչ ի նկատի ունեն: Նման եւ այլ բազմաթիւ հարցերի առջեւ համշենական ինքնութեանը տէր կանգնողների մտքերը դեռ յախուռն վիճակում են...*

---

21. Թալին Բիւիւքքիւրքչիեան, «Մոռանալով եւ թաքնուելով՝ գոյութիւն ունենալը համշենցիների մօտ» վերնագրով չհրատարակուած ատենախօսական ուսումնասիրութիւնը, Ստամպուլի Բիլգի համալսարանի Սոցիոլոգիայի ինստիտուտի մշակութային ուսումնասիրութիւնների ուղղութեամբ ասպիրանտուրայի ծրագիր, 2011:

22. Լեւոն Խաչիկեան, նշու. աշխ., էջ 38, յղում 30:

23. Խոպացի արհեստաւոր Հըզըր Յազըջըի հետ արուած հարցազրոյցը տե՛ս «Բիրեաշամ» ամսագրում, համար 2, 2008 թ. Յուլիս /թուրքերէն/:

24. Նոյն տեղում:

25. Արդվինի գործարարութեան ուղեցոյց, ATSO հրատարակչութիւն, 2012 /թուրքերէն/:

26. Ջեմիլ Աքսու, «Սեւ ծովի ձախ անկիւնը՝ Խոպա», «Մութ էր Սեւ ծովում», խմբագիր՝ Ուղուր Բիրեօլ, Ստամբուլ, «Իլեթիշիմ» հրատարակչութիւն, 2012 թ. /թուրքերէն/:

27. Օզջան Ալպեր եւ Ջեմիլ Աքսու, «Ձախակողմեանութիւնը, տեղացիութիւնը եւ ժողովրդավարական ինքնավարութիւնը», «Բիրիքիմ» հանդէս, թիւ 259, 2011 թ. /թուրքերէն/:

***Յօդուածը հրատարակուել է «Թոփլումսալ թարիհ» հանդէսում, թիւ՝ 236, 2013 թ. Օգոստոս, էջ 40–47***

# ԵԹԷ ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԻՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*Ինչպէս վերջերս թուրքերը տոլման գրանցեցին թուրքական ճաշատեսակ. դէ դրանից յետոյ ինչքան էլ հայն ասի. չէ, հայկական է, ո՞վ կը հաւատայ...*

*Տարիներ առաջ Ջիւան Գասպարեանը գալիս էր Բելգիա ու թուրք երաժիշտներին դուդուկ նուագել էր սովորեցնում... Այնպէս պատահեց, որ մի օր տարբեր ազգերի երաժշտական փառատօն էր Բրիւսելում ու թուրքերը երգեցին «Սարի Գիալի» երգը դուդուկի նուագակցութեամբ: Ես չհամբերեցի, երբ կատարումն աւարտուեց, մօտեցայ հարցրեցի.*

*-Դուք գիտէ՞ք, որ այդ երգը հայկական է, ինչպէս նաեւ դուդուկը:*

*-Ոչ տիկին, սա թուրքական երգ է, դուդուկն էլ է թուրքական...*

*Ես անզօր էի պնդելու, քանզի մենք մեր եղածին տէր չենք...*

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆին

Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն իհռաձայնել՝
(626) 398-0506

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**Massis Weekly**

*You are cordially invited to celebrate*

## «ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ-ի 33-րդ Տարեդարձի Ճաշկերոյթ Պարահանդէս

## *Massis Weekly 33rd Anniversary Dinner Dance*

Երեկոն պիտի խանդավառէ սիրուած Երգիչ՝

## Յարութ Յակոբեան

Performance by:

## HAROUT HAGOPIAN



Տեղի կ՚ունենայ

## Շաբաթ 9 Նոյեմբեր, 2013

Ժամը 8-էն սկսեալ՝

## *Saturday November* 9, 2013

Starting at 8:00 p.m.

At the Arbat Banquet Hall
711 S. San Fernando Rd. Burbank, CA 91502

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել
For more info. call: (626)7 97-7680
Donation $75.00